



ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Հանրաքուէ՝ Յանուսն Յեղափոխութեան

Հայաստանի Ազգային ժողովին կողմէ հաստատուելէ ետք ու նախագահի ստորագրութեան արժանանալով Սահմանադրական Դատարանի եօթը անդամներու պաշտօնավարութիւնը դադարեցնելու օրինագծի գործադրութիւնը թեւակոխեց վճռական հանգրուան: Ապրիլ 5-ին կայանալիք ժողովրդային հանրաքուէով, նախկին իշխանութեան ազդեցութեան տակ գտնուող վերջին «ամրոցը» Սահմանադրական Դատարանը կարելի պիտի ըլլայ ենթարկել հիմնական փոփոխութեան:

2018-ի Թաւշեայ յեղափոխութիւնը կարճ ժամանակուայ մէջ կարողացաւ լուծել գործադիր եւ օրէնսդիր իշխանութեան հարցը՝ ձեւաւորելով ժողովուրդի վստահութիւնը վայելող խորհրդարան եւ կառավարութիւն: Սակայն, դատական իշխանութեան հարցը մնաց առկախ, վերածուելով սուր տագնապի, որ սկսած էր խոչընդոտել երկրէն ներս ծաւալուող բարեփոխումներու գործընթացին:

Սահմանադրական Դատարանի 9 անդամներէն 7-ն, որոնց հեռացնելու նպատակաւորուած է հանրաքուէն, ընտրուած են հին սահմանադրութեամբ նախատեսուած օրէնքներով, որոշ պարագաներուն նաեւ խախտելով կամ շրջանցելով նոյն այդ օրէնքները: Երկար ժամանակէ ի վեր իշխանութիւնները կը փորձեն համոզել այդ եօթը անդամները, որպէսզի կամուրջի հեռանան իրենց պաշտօններէն, որպէսզի կարելի ըլլայ երկիրը օժտել ժողովուրդի վստահութիւնը վայելող Սահմանադրական Դատարանով: Դատարանը իր ներկայ կազմով երկար տարիներ եղած է նախկին իշխանութիւններուն ենթակայ մարմին մը, որ հաստատած է անոնց բոլոր զեղծարարութիւնները, յատկապէս յաջորդական ընտրութիւններու ընթացքին արձանագրուած լայնածաւալ ու «աչք ծակող» խախտումներն ու կեղծիքները: Այդ եօթը անդամներուն առիթ տրուած էր մինչեւ Փետրուարի վերջը, որպէսզի ինքնակամ հեռանան ու ցկեանս ստանան իրենց ներկայի արշխատավարձերը: Այս կարգադրութեամբ բացուած պատուհանը մինչեւ օրս չօգտագործուեցաւ Դատարանի ոչ մէկ անդամին կողմէ: Սակայն գիտակցելով իրենց սպասող անորոշ ճակատագրին, անհաւանական չէ, որ անոնցմէ ոմանք եւ կամ բոլորը ներկայացնեն իրենց հրաժարականը՝ մինչեւ ամսուայ աւարտը:

Նախագահ Արմէն Սարգսեան Ստորագրեց Հրամանագիր՝ Սահմանադրութեան Փոփոխութիւններու Հանրաքուէն Ապրիլ 5-ին Նշանակելու Մասին

Նախագահ Արմէն Սարգսեանը ստորագրած է հրամանագիր Սահմանադրութեան փոփոխութիւններու հանրաքուէն Ապրիլ 5-ին նշանակելու մասին:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը արձագանգելով իր ֆեյսպուքեան էջին վրայ գրած է. «Հանրապետութեան նախագահը ստորագրել է Ապրիլի 5-ին հանրաքուէ նշանակելու մասին հրամանագիրը: Ապրիլի 5-ին Յեղափոխութեանը ասում ենք Այո, Ազատութեանը ասում ենք Այո, Ապագային ասում ենք Այո եւ քողովիցիոններին վրայ շրխկացնում ենք դուռը»:

Ապա ֆեյսպուքեան ուղիղ եթերի ժամանակ ան կոչ ըրած է արտերկրի մէջ բնակող ՀՀ քաղաքացիներուն տոմսեր գնել դէպի Հայաստան, դալ եւ մասնակցիլ հանրաքուէին:

Աւելի վաղ ալ Հայաստանի նախագահի աշխատակազմը ներկայացուցած է պարզաբանումներ Ազգային ժողովի կողմէ ընդունուած «Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութիւններու նախագիծը հան-



Նախագահ Արմէն Սարգսեան Կը ստորագրէ Սահմանադրութեան փոփոխութիւններու հանրաքուէի հրամանագիրը

րաքուէի դնելու մասին» որոշման առնչութեամբ նախագահի գործառույթներու մասին:

Պարզաբանման մէջ նշուած է, որ նախագահին ներկայացուած փաստաթուղթն օրէնքի նախագիծ է, օրէնք է, այլ նախագիծը հանրաքուէի դնելու մասին Աժ որոշումն է:

«Վերոնշեալ որոշման առնչութեամբ Հանրապետութեան նախագահի սահմանադրական գործառույթներն ընթացակարգային են եւ սահմանափակուած են միմիայն եւ բացառապէս Սահմանադրութեան 206-րդ յօդուածի համաձայն

Ռուսական «Կազեթա»-ն Անդրադարձած Է Հայաստանի «Տնտեսական Հրաշքին»



Յետեղափոխական Հայաստանի յաջողութիւններու մասին ռուսական մամուլը, մեղմ ըսած, յաճախ չի գրեր: «Կազեթա.ռու»-ն այսօր այդ աւանդույթը խախտած է: «Տնտեսական հրաշք՝ ինչպէս Հայաստանը առաջ անցաւ Ռուսաստանէն» վերնագրով ռուսական թերթը յօդուած հրատարակած է, որուն մէջ կ'ամփոփէ ԵԱՏՄ անդամներու տնտեսութիւններու գրանցած արդիւնքները:

ԵԱՏՄ հնգեակի բոլոր երկիրները պաշտօնական տուեալներու համաձայն դրական արդիւնքներ գրանցած են, սակայն Համախառն ներքին արդիւնքի (ՀՆԱ) աճի տարբերութիւնը ցնցող է, կը գրէ յօդուածի հեղինակը: ԵԱՏՄ

երկիրներու շարքին ամենաբարձր աճը գրանցած է Հայաստանը, թերթը նշած է, որ 2019 թուականի առաջին 9 ամիսներուն Հայաստանի տնտեսութիւնը նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ աճած է 7,5 տոկոսով, համեմատելու համար՝ նոյն ժամանակահատուածին Ռուսաստանի տնտեսութիւնը աճած է 1,3 տոկոս:

Ամբողջ տարուան կանխատեսումը, որ նախանշած է Հայաստանի տնտեսութեան նախարար Տիգրան Խաչատրեանը, պիտի կազմէ 7,9 տոկոս: Սա ամենաբարձր արդիւնքն է ոչ միայն Եւրասիական երկիրներու շրջագիծէն ներս: Հա-

Երեւանը National Geographic-ի Առաջարկած Վայրերու «Cool list»-ին Վրայ

National Geographic-ը խորհուրդ կու տայ արդէն սկսիլ մշակել տարուայ ընթացքին ճանապարհորդելու ուղղութիւնները: Այն իր «հետաքրքրական ցուցակին» (Cool list) վրայ ներառած է 20 ամենահետաքրքիր վայրերը. Հայաստանի մայրաքաղաք Երեւանը անոնցմէ մէկն է:

«Հետաքրքրական ցուցակին» մէջ ներառուած են ինչպէս քաղաքներ, այնպէս ալ պետութիւններ՝ Նամիբիայէն Վիեթնամ, Երեւան, Լոս Անճելըս:

«Նոր թռիչքներ կը բացուին դէպի Հայաստանի մայրաքաղաք՝ աշխարհի հնագոյն մշտական բնակեցուած քաղաքներէն մէկը», - կը գրէ National Geographic-ն ու կը պատմէ եւրոպական «Ryanair»-ի եւ «Wizz Air»-ի Հայաստան մուտքի մասին:

Այն կը յիշեցնէ, որ դէպի Երեւան զբօսաշրջային փաթեթներ կ'առաջարկեն նաեւ Black Tomato and G Adventures զբօսաշրջային հեղինակաւոր ընկերութիւնները՝ հիմնական կեդրոնանալով ոչ միայն Երեւանի հարուստ պատմական անցեալի, այլ առանձնապատուկ խոհանոցի ու գինիի հազարամեայ աւանդույթներու վրայ, դրամագրուի վերածելով Մետաքսի ճանապարհի նկատմամբ մեծցող հետաքրքրութիւնը:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԼՔԿ-ն Յայտարարեց Որ, Հանրաքուէին «Ոչ»-ի Արշաւ Պիտի Չսկսի



Աժ «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար Էտոնն Մարուքեան

Ազգային ժողովի ընդդիմադիր «Լուսաւոր Հայաստան» խմբակցութիւնը թէեւ սպասուող հանրաքուէին հակասահմանադրական կը համարէ...

«Մենք չենք պատրաստուած դառնալ այս հակահերոսը», - ըսած է խմբակցութեան ղեկավար Էտոնն Մարուքեանը...

հետեւ իշխանութեանն օդի պէս պէտք է, որ ինչ-որ մարդիկ «ոչ»-ի քարոզչութիւն տանեն...

Հանրապետականը Կը Դատապարտէ Սահմանադրութեան Փոփոխութիւնները

Հայաստանի հանրապետական կուսակցութիւնը (ՀԿԿ) «խստօրէն դատապարտում է իշխանութեան նախաձեռնած «Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութիւններ»...

դրոյթները», - ասված է երեկ երեկոյան հրապարակված հայտարարութեանում:

«Հոկտեմբեր 27»- ի Գործէն Ձեղջուած Մասին Հանար Քննչական Խումբ Ստեղծուած է

«Հոկտեմբեր 27»-ի գործին անջատուած եւ կարճուած մասի քննութիւնը իրականացնելու համար Ազգային Անվտանգութեան Ծառայութեան ներս (ԱԱԾ) քննչական խումբ ստեղծուած է...

միայն «Հոկտեմբեր 27»-ի գործով տուժողի իրաւաչափորդ Անահիտ Բախչեանի դիմումով: «Ձեռն ուղղուած պայմանաւորել, որ այդ բողոքի քննարկման շրջանակներում է դա եղել...

Հայաստանի Ժողովրդագրական Պատկերը 2019-ին

2019 թուականին Հայաստանի մէջ գաղթի մնացորդը կազմած է -16.0 հազար, այս մասին կը տեղեկանանք Վիճակագրական կոմիտէի հրապարակած տուեալներէն: Վերջին տարիներուն սա ամենացած ցուցանիշը եղած է: 2018-ին գաղթի մնացորդը կազմած էր -18.2 հազար, 2017-ին՝ -24.0 հազար, 2016-ին՝ -24.9 հազար մարդ: Ասոր զուգահեռ նուազած է Հայաստանի բնական յաւելածը: Այսպէս, եթէ 2016 թուականին բնական յաւելածը կազմած էր 12.4 հազար, 2017-ին՝ 10.6 հազար, 2018-ին՝ 10.8 հազար, ապա 2019-ին այն կազմած է 9.9 հազար մարդ:

Վարչապետը Վահագն Վերմիշեանի Կողմէ Կաշառք Վերցնելը Անձնական Վիրաւորանք Կը Համարէ

Քաղաքաշինութեան կոմիտէի նախագահ Վահագն Վերմիշեանը, կաշառք վերցնելով, անձնական վիրաւորանք հասցուցած է վարչապետին, Հայաստանի ժողովուրդին ու թաւաշէյ լեզուափոխութեան արժեքներուն, կառավարութեան նիստի մեկնարկին յայտարարած է Նիկոլ Փաշինեանը:



Քաղաքաշինութեան կոմիտէի նախագահ Վահագն Վերմիշեան

կանը եղած է, անցեալին ալ շարք մը ղեկավար պաշտօններ զբաղեցուցած է Ռուսաստանի Դաշնութեան մէջ: Այն, որ գործող պաշտօնէաներու մասնակցութեամբ քորուսիցիոն ղեկավար կը բացայայտուին, կը խօսի իշխանութիւններու քաղաքական կամքի մասին, կը նկատէ «Թրանսփարընսի ինթըրնաշնլը» հակաքորուսիցիոն կեդրոնի տնօրէն Սոնա Ալվազեանը:

«Նման վիրաւորանք հասցրած անձը, անձինք պէտք է ենթարկուեն խստագոյն պատասխանատուութեան: Եթէ Հայաստանի Հանրապետութիւնում կար որեւէ մէկը, որ կասկածուի է քորուսիցիոն արմատախիւլ անելու մեր կամքին եւ վճռականութեանը, յոյս ունեւմ, որ այդ մարդիկ հասկացան, որ ամէն ինչ շատ աւելի լուրջ է, քան նրանք կարող են պատկերացնել», - ըսած է ան:

«Դրանով նաեւ ապացուցուած է, որ նախկին քորուսիցիոն պաշտօնէաների նկատմամբ հետապնդումները ոչ թէ քաղաքական հետապնդումներ են, այլ հենց քորուսիցիոն գործարքները պատճառով հետապնդումներ են», - ըսած է ան:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱԿՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԼՈՒՐԵՐ

Ըստ Միջազգային Դիտորդներու, Ատրպէյճանի Ընտրութիւնները Չեն Համապատասխաներ Եւրոպական Չափանիշներուն



Ատրպէյճանի խորհրդարանական արտահերթ ընտրութիւնները աւարտիկն տեղի ունենայ ձայներու հաշուարկ

Լցնումներու, բազմակի քուէ-արկութիւններու, անկախ դիտորդներու նկատմամբ ճնշումներու ուղեկցութեամբ Փետրուար 9-ին, Ատրպէյճանի մէջ կայացած խորհրդարանական արտահերթ ընտրութիւնները աւարտած են իշխող ընտանիքի հերթական յաղթանակով:

Նախնական արդիւնքներու համաձայն, Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի եւ փոխնախագահ Մեհրիպան Ալիեւայի գլխաւորած «Ենի Ազերպայճան» կուսակցութիւնը նոր գումարման Միլի մեծ-լիսին (Նորհրդարանի) առնուազն 71 պատգամաւոր պիտի ունենայ:

Բացառապէս մեծամասնական ընտրակարգով կայացած ընտրութիւններու ընթացքին շարք մը ընտրատարածքներու մէջ յաջողութեան հասած են նաեւ անկախ թեկնածուներ, որոնց մեծ մասը, սակայն, ոչ միայն սերտ կապեր ունի իշխող կուսակցութեան հետ, այլեւ բացայայտօրէն կ'աջակցէր «Ենի Ազերպայճանի» նախընտրական ծրագրին: Այս պահի դրութեամբ յայտնի է, որ պատգամաւորական մասնաթ պիտի ունենան երկու ընդդիմադիր գործիչներ՝ էրքին Կատիրլին եւ Վուկար Պայրամովը:

Պաշտօնական Պաքոն անցած շաբաթներուն կը հաւաստի-

ացնէր, որ ընտրութիւնները պիտի ըլլան թափանցիկ եւ ժողովրդավարական չափանիշներուն համապատասխան:

Ատրպէյճանական ընդդիմութիւնը, սակայն, կը պնդէ, թէ ընտրութիւնները համատարած կեղծուած են: Այս ընտրութիւնները հիմնական պոչթթած ընդդիմադիր ուժերը կոչ ըրած են իրենց աջակիցներուն Փետրուար 16-ին դուրս գալ փողոց՝ ընդդէմ քուէարկութեան կեղծուած արդիւնքներուն:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատութիւններու եւ մարդու իրաւունքներու գրասենեակը (ԺՀՄԻԳ), ինչպէս յայտարարած է դիտորդական առաքելութեան ղեկավար Արթուր Գերասիմովը, նոյնպէս արձանագրած է, որ ընտրութիւնները կայացած են խախտումներով, ոչ թափանցիկ եւ ոչ ժողովրդավար:

«Ընտրութիւնները չեն համապատասխանած եւրոպական ժողովրդավարութեան չափանիշներուն եւ անոնք կարելի չէ համարել բնակչութեան ազատ կամարտայայտութիւն», - յայտարարած են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի, ԵՆԽՎ-ի եւ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի դիտորդական առաքելութիւններու ղեկավարները:

Վերսայլի մէջ Հայոց Ցեղասպանութեան Ձոհերու Յիշատակին Նուիրուած Համերգ Պիտի Կայանայ



Ապրիլ 24-ին Վերսայլի պալատին մէջ Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած համերգ պիտի կայանայ:

Պալատի պաշտօնական կայքին

մէջ ըստուած է, որ Վերսայլի թագաւորական մատուռին մէջ պիտի հնչէ հայ ազգի եւ անոր բազմադարեայ պատմութեան ձայնը:

Շուշան Սիրանուսեանը, Աստղիկ

Հայաստանի Ղեկավարները Հիւրընկալեցին Յորդանանի թագաւորին



Յորդանանի թագաւորի Ապտալա Երկրորդի հանդիպումը Վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ

Յորդանանի հետ չարաբերութիւնները ՀՀ-ի համար շատ կարեւոր են, կառավարութեան մէջ հիւրընկալելով պաշտօնական այցով Հայաստան գտնուող այդ երկրի թագաւոր Ապտալա Երկրորդ Իպն Ալ Հուսէյն Ալ Հաշիմին՝ ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Այս մասին կը տեղեկացնեն վարչապետի աշխատակազմէն:

«Մեր ժողովուրդը շատ դրական պատմական յիշողութիւն ունի Ձեր երկրի հետ կապուած, քանի որ Ձեր երկիրը, Ձեր ժողովուրդը մեծ աջակցութիւն ցուցաբերած է Հայոց ցեղասպանութենէն փրկուածներու նկատմամբ, եւ այս փաստն աւելի կը ջերմացնէ մեր վերաբերմունքը Յորդանանի եւ անոր ժողովուրդի նկատմամբ», - նշած է Փաշինեանը:

Հանդիպման ընթացքին անոնք քննարկած են Հայ-յորդանանեան տնտեսական եւ մարդասիրական յարաբերութիւններու զարգացման վերաբերող շարք մը հարցեր, անդրադարձած են Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացին եւ ընդգծած հիմնախնդրի՝ բանակ-

ցային ճանապարհով լուծման կարելորութիւնը:

Նախագահի աշխատակազմէն ալ յայտնած են, որ Յորդանանի նախագահ հիւրընկալած է նաեւ Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանը: Վերջինս հանդիպման ժամանակ բարձրացուցած է Հայաստանի քաղաքացիներու համար Յորդանան մուտքի արտօնազրային ռեժիմի վերացման, ինչպէս նաեւ երկու երկիրներու միջեւ կրկնակի հարկումը բացառելու մասին պայմանագրի ստորագրման հարցը:

Զրուցակիցները նշած են, որ արդիւնաւէտ համագործակցութեան մեծ հնարաւորութիւններ կան բարձր արհեստագիտութիւններու, կրթութեան, գիտութեան եւ առողջապահութեան ոլորտներուն մէջ: Կարելորուած է նաեւ ուղիղ օդային հաղորդակցութեան բացումը երկու երկիրներու մայրաքաղաքներու միջեւ:

Յորդանանի թագաւորը այցելած է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր հիւրընկալուած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի կողմէ:

ԵՆԽՎ Համագեկուցողները Կոչ Կ'ընեն Սահմանադրութեան Փոփոխութիւններու Սասին Կարծիք Հայցելու Վեցետիկի Յանձնաժողովէն

ԵՆԽՎ համագեկուցողները կոչ կ'ընեն Հայաստանի իշխանութիւններուն Սահմանադրութեան եւ անոր առնչուող փոփոխութիւններու վերաբերեալ կարծիք հայցելու վեցետիկի յանձնաժողովէն: Այս մասին նշուած է ԵՆԽՎ Հայաստանի մշտադիտարկման համագեկուցողներ Անտրէյ Շիրչեյի եւ Քիմմօ Քիլիւնէի յայտարարութեան մէջ:

Անոնք կը նշեն, որ Հայաստանի իշխանութիւնները որոշած են արտահերթ նիստ կայացնել՝ քննարկելու շարք մը փոփոխութիւններ, որոնք կը հանեն օրէնսդրական նախաձեռնութիւններու՝ Սահմանադրութեան համապատասխանելու հարցը ստուգելու համար ՄԴ դիմելու պահանջը:

«Շարք մը այլ հարցերու կողքին, սա կը փոխէ նաեւ Սահմանադրութեան փոփոխութեան գործընթացը: Բացի այդ, ներկայացուած է Սահմանադրութեան փոփոխութիւնը, որու նպատակը, կարծես թէ, ՄԴ քանի մը անդամներու

պաշտօնավարումն անմիջապէս դադարեցնելն է», - յայտարարած են համագեկուցողներ Անտրէյ Շիրչեյը եւ Քիմմօ Քիլիւնէն, ապա շարունակած:

«Այս երկու հարցերը կարեւոր են, եւ առաջարկուող փոփոխութիւնները կրնան երկարաժամկէտ հետեւանքներ ունենալ սահմանադրական հիմնարկներու գործունէութեան վրայ: Այս ծիրէն ներս, ինչպէս նաեւ հաշուի առնելով ծագած հարցերը՝ մենք կոչ կ'ընենք Հայաստանի իշխանութիւններուն հնարաւորինս արագ կարծիք հայցելու վեցետիկի յանձնաժողովի սահմանադրական իրաւունքի փորձագէտներէն:

Մենք կը հաւատանք՝ այդ կարծիքը, որ կրնայ շատ արագ մշակուիլ արագացուած ընթացակարգով, արժէքաւոր կ'ըլլայ բոլոր կողմերու, այդ շարքին՝ հայաստանեան ընտրողներու համար՝ հանրաքուէ կայացնելու պարագային»:

Սիրանուսեանը, վարդան Մամիկոնեանը եւ Մելիտի Լուլեճեանը պիտի կատարեն Առնօ Պապաճան-

եանի թրին եռեակը եւ կոմիտասի ու Արամ Խաչատրեանի ստեղծագործութիւնները:

Հայաստանի Կառավարութիւնը «Նայիրիտի» Շուրջ կը Բանակցի Իրանական Ընկերութեան Հետ



Հայաստանի կառավարութիւնը կը բանակցի ամերիկեան պատժամիջոցներու ներքոյ գտնուող իրանական Tabriz Petrochemical Company ընկերութեան հետ «Նայիրիտ» գործարանի հնարաւոր վերագործարկման շուրջ:

«Ազատութեան» գրաւոր հարցմանն ի պատասխան, փոխվարչապետ Տիգրան Աւինեանի գրասենեակի ղեկավար Սերժ Վարազ

Սիսեանը նշած է. - ««Tabriz Petrochemical Company»-ի ներկայացուցիչները հետ հանդիպումը տեղի է ունեցել Յուլիանի 30-ին, Երեւանում: Հանդիպման խնդրանքով դիմել է իրանական կողմը, եւ ինչպէս այլ ներդրողների պարագայում, կազմակերպուել է հանդիպում, որի ընթացքում ընկերութեան ներկայացուցիչները յայտնել են, որ հետաքրքրուած են

Նայիրիտի վերագործարկմամբ: Ընկերութեան կողմից այս հարցով նախատեսուած է իրականացնել իրագործելիութեան ուսումնասիրութիւն (feasibility study), որին կարող է հետեւել նաեւ ֆինանսական հաշուէքննութիւն: Իրագործելիութեան ուսումնասիրութիւնը նախատեսուած է աւարտել 2020թ. Մարտի վերջին: Ուսումնասիրութիւնից յետոյ պատրաստ ենք քննարկել հնարաւոր համագործակցութեան տարբերակները եւ ձեւաչափերը: Իրանական ընկերութեան ԱՄՆ պատժամիջոցների ներքոյ գտնուելու մասին տեղեկութիւններ չունենք»:

ԱՄՆ ֆինանսներու նախարարութեան (U.S. Department of the Treasury) պաշտօնական կայքէջի համաձայն, Tabriz Petrochemical Company-ն 2018 թուականէն կը գտնուի պատժամիջոցներու ներքոյ:

Հայաստանի տնտեսութեան նախարար Տիգրան Խաչատրեանը «Ազատութեան» հետ հարցի ժամանակ ըսած է. - «Մանրամասնել չեմ կարող: Աշխատանքները պիտի սկսեն հիմնաւորուածութիւնը պէտք է ունենան: Եւ դա լաւագոյն ձեւով կարող են գնահատել այն անձիք, ովքեր հետաքրքրուած են դրա շարունակական կաշտութեան հաշուարկները կատարելով: Կառավարութիւնը բոլոր նման դէպքերում, եթէ լինի ներդրումային այնպիսի առաջարկ, որը իր երկարաժամկէտ կաշտութեան հարցում երաշխիքներ է պարունակում, պատ-

րաստ է քննարկել»:

Հարցին, թէ արդեօք կայ մտաւոր հաշուարկ, թէ որքան գումար հարկաւոր է «Նայիրիտ» վերագործարկելու համար, նախարարն արձագանգած է. - «Ես էդպիսի թիւ հիմա չեմ կարող ասել, որովհետեւ անկախ գումարի չափից, նախ պէտք է գնահատուի դրա իրագործելիութեան հարցը»:

«Նայիրիտ» սնանկացման գործով կառավարիչ Կարէն Ասատրեանն «Ազատութեան» փոխանցած է, որ ներկայիս գործարանի պարտքը կը կազմէ մօտ 262 միլիոն տոլար, որմէ 162 միլիոնը ԱՊՀ միջպետական դրամատան ունեցած պարտքն է, որ, սակայն, դրամատունը 2016 թուականին զիջած է Հայաստանի կառավարութեան՝ դրամատան մէջ գրաւորուած «Նայիրիտ» անշարժ գոյքի հետ միասին:

Բացի այդ «Նայիրիտ» եւս 100 միլիոն տոլար պարտք է գրեթէ 300 ընկերութիւններու ու անձանց:

«Նայիրիտ» գործարանը դադարած է արտադրանք թողարկել 2010 թուականի Մարտին: Այդ ժամանակ աշխատակիցներու թուաքանակը մօտ 2 300 էր: Ընկերութիւնը սնանկ ճանչցուած է 2016-ին՝ «Հայաստանի ելեկտրական ցանցերու» հայցադիմումի հիման վրայ, որուն գործարանը 1 միլիոն 200 միլիոն դրամէն աւելի գումար պարտք է:

Ներկայիս «Նայիրիտ» մէջ կ'աշխատի 250 հոգի՝ թեխնիքական անվտանգութեան ապահովման եւ վարչական գիծով:

Նախագահ Արմէն Սարգսեան Ստորագրեց

Շարունակուած է 1-էն

եռօրեայ ժամկէտում հանրաքուէի օր նշանակելու մասին հրամանագիր ստորագրելով:

Ընդ որում, համաձայն «Հանրաքուէի մասին» սահմանադրական օրէնքի 12-րդ յօդուածի Հանրապետութեան նախագահի կողմից վերոնշեալ եռօրեայ ժամկէտում հանրաքուէ չնշանակուելու դէպքում հանրաքուէն համարուած է նշանակուած՝ սահմանուած ժամկէտի վերջին օրուայ յաջորդող 65-րդ օրուան նախորդող Կիրակի օրը:

Հարկ ենք համարում նշել նաեւ, որ հանրաքուէի օր նշանա-

կելով կամ չնշանակելով, Հանրապետութեան նախագահը չի արտաջատում իր վերաբերմունքն ու դիրքորոշումը Ազգային ժողովի կողմից ընդունուած եւ հանրաքուէի դրուելիք Սահմանադրութեան փոփոխութիւնների բովանդակութեան, ինչպէս նաեւ այդ որոշման կաշտման ընթացակարգերի վերաբերեալ», - ըսուած է պարզաբանման մէջ:

Յիշեցնենք՝ Փետրուար 6-ին Ազգային ժողովը արտահերթ նիստի ընթացքին կողմ 88 եւ 15 դէմ ձայներու չարաբերակցութեամբ ընդունեց սահմանադրական փոփոխութիւնները հանրաքուէի դնելու որոշման նախագիծը:

Ռուսական «Կագեթա»-ն Անդրադարձած է

Շարունակուած է 1-էն

յաստանը կրնայ լաւագոյնը ըլլալ Սեւծովեան տարածաշրջանին մէջ, ետին թողելով Վրաստանը, Թուրքիան, Պուլկարիան, Ռումինիան, Մոլդովան, Ուքրանիան եւ այլ երկիրներ:

Քորուփցիայի դէմ պայքարը, պիզնեսի համար հասկնալի խաղի կանոններու ստեղծումը, դրամատան թափանցիկ համակարգը դրական կ'ազդեն ներդրողներու ծրագրերուն վրայ, Առեւտուրի եւ զարգացման սեւծովեան դրամատան նախագահ Տմիթրի Փանքինի խօսքերը մեջբերած է «Կագեթա»-ն: Փանքինը նաեւ կը կ'անխատեսէ, որ Հայաստանի իշխանութիւնները՝ ենթակառուցուածքներու զարգացման վրայ պետական ծախսերու մասնաբաժինը պիտուէին մէջ Համախառն ներքին արդիւնքը (ՀՆԱ) 2,8 տոկոսէն մինչեւ 5 տոկոս մեծցնելու մտադրութիւնը դրական ազդեցութիւն կ'ունենայ երկրի տնտեսութեան զարգացման վրայ:

Ի՞նչը նպաստած է «Հայկական տնտեսական հրաշքին», եթէ տպաւորիչ յաջողութիւն ոչ արդիւնաբերութեան, ոչ ալ առեւտուրի ոլորտին մէջ չէ արձանագրուած, իսկ շինարարութեան ոլորտին մէջ աճը նոյնիսկ դանդաղած է մինչեւ 4,5 տոկոս, ուժանիւթի ոլորտին մէջ՝ մինչեւ 2,7 տոկոս, գրած է յօդուածի հեղինակը եւ շարունակած, որ առաջընթացն ապահոված է իշխանութիւններու եւ հասարակութեան՝ տնտեսութիւնը թափանցիկ դարձնելու ցանկութիւնը:

Ռուսական պարբերականը չի-

չեցուցած է, որ 2018-ին Հայաստանը քաղաքական ճգնաժամ ապրած է: Նոր խորհրդարանը եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը ստեղծած են Քորուփցիայի կանխարգելման յանձնաժողով եւ կազմակերպած են իրական վերահսկողութիւն պաշտօնեաներու եկամուտներու եւ ծախսերու նկատմամբ:

346 քորուփցիոն գործերու բացայայտման շնորհիւ 105 միլիոն տոլար վերադարձուած է պիւտձէ՝ 7 անգամ աւելի, քան վերադարձուած է անցած 11 տարիներու ընթացքին նոյն պատճառներով:

Վկայակոչելով հայկական մամուլը՝ ուսուական պարբերականը գրած է, որ Հայաստանի պիւտձէն, որ կը կազմէր 3 միլիոն տոլար, կը գողնային մօտ 1 միլիոնը, իսկ եւս 900 միլիոն տոլար պիւտձէ չէր հասներ հարկերու տեսքով: Ստուերներէն ստացուած եկամուտներու պատճառով հարկային եկամուտները նախորդ տարի աճած էին 43,6 տոկոսով 2017-ի համեմատ, իսկ 2018-ի համեմատ՝ 20 տոկոսով:

Յօդուածի հեղինակը համեմատականներ տանելով ԵԱՏՄ եւ տարածաշրջանի երկիրներու միջեւ՝ շեշտած է, որ Հայաստանի մէջ նուազագոյն աշխատավարձը բարձրացած է 20 տոկոսով, իսկ 18 տարեկանէն վար երեխաներու բժշկական ծառայութիւնները դարձած են անվճար, աւելցնելով, թէ փաստն այն է, որ երեք միլիոն բնակչութիւն ունեցող Հայաստանը գերազանցած է Վրաստանին եւ նոյնիսկ նախորդ հարուստ Ատրպէյճանին՝ մէկ շունչին հասնող Համախառն ներքին արդիւնքի (ՀՆԱ) առումով:

Հանրաքուէ՝ Յանուն Յեղափոխութեան

Շարունակուած է 16-էն

Այս օրերուն կ'ընթանան բուռն բանավեճեր՝ իրաւաբաններու եւ սահմանադրական հարցերու մասնագէտներուն միջեւ: Ոմանց կարծիքով օրինագիծը հանրաքուէի դրուելէ առաջ պէտք է արժանանայ Սահմանադրական Դատարանի հաւանութեան: Իշխանութեան տեսակէտը պաշտպանող իրաւագէտները կը պնդեն, որ Սահմանադրական Դատարանը իրաւասու չէ քննելու այս հարցը, նկատի ունենալով որ այն կը վերաբերի իրենց անձին եւ բնականաբար անոնք ունին շահերու բախում:

Մինչ այս վեճերը կը շարունակուին, հանրաքուէի նախապատրաստական աշխատանքները սկսած են ու «Այո»-ի կողմնակիցները արդէն իսկ յայտնի կը դառնան, գլխաւորութեամբ իշխող «Իմ քայլը» դաշինքին: Առայժմ յստակ չէ, թէ ո՞ր ուժերը պիտի հանդիսանան «Ոչ»-ի դրոշակակիրները: Խորհրդարանական ընդդիմութիւնը ներկայացնող երկու ուժերը՝ «Լուսաւոր Հայաս-

տան» եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնները, ըստ երեւոյթին պատրաստ չեն այդ ծանր բեռը ստանձնելու եւ ժողովուրդի հակադեցութեան արժանանալու: Նախկին իշխանութիւններու կողմնակիցները առայժմ խարխափում են մէջ եւ: Մասնակցի՞ ընտրութիւններուն եւ «Ոչ» քուէարկելու կոչով հանդէս գալ ու այդպիսով «յեղափոխական գազուածը» ակամայ զօրաշարժի ենթարկել, թէ՞, հանրաքուէն պոչքոթի ենթարկելով վերջաւորութեան յաղթանակ յայտարարել՝ ընտրութիւններուն բոլոր չմասնակցողները իրենց կողմնակիցները հռչակելով:

Յառաջիկայ օրերուն պատկերը աւելի կը բիւրեղանայ, սակայն իշխանութիւններու այս քայլը, թէկուզ ուշացած, պիտի գայ իր տրամաբանական աւարտին հասցնելու յեղափոխութիւնը ու այս հանգամանքը նկատի ունենալով, խիստ կարեւոր է ժողովուրդի մեծաթիւ մասնակցութիւնը հանրաքուէին, կանխելու համար բոլոր տեսակի կասկածներն ու շահագործումները:

«ՄԱՍԻՍ»

«Մենք Կ'ակնկալենք, որ Մարդիկ Հասկնան Հայ Ժողովուրդի Կորուստները եւ Տառապանքը». Կ'ըստ Մաշալեան Պատրիարքը



Պոլսոյ Հայոց պատրիարք Սա-
հակ Արք. Մաշալեան հարցազրոյց
մը տուած է թրքական «Hurriyet»
իշխանամէտ պարբերականին: Հար-
ցազրոյցին մէջ անդրադարձ եղած
է Հայոց Յեղասպանութեան:

Թերթի լրագրողը Մաշալեա-
նէն հետաքրքրուած է, որ արդեօք
Ապրիլ 24-ին տեղի ունեցող ոգեկո-
չումները կրնա՞ն ցաւերը կիսելու
համար ձիշդ հող նախապատրաս-
տել:

Մաշալեան նշած է, որ Թուրք-
իոյ մէջ Ապրիլ 24-ը երկար ժամա-
նակ թապու համարուած է եւ
ընկալուած է իրբեւ թշնամական
վերաբերմունք, որ կտորուած է
Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թա-
յիպ էրտողանի կողմէ, երբ 2015-
ին՝ այն ժամանակ վարչապետ՝
էրտողանը «ցաւակցական հեռա-
գիր» չղեց:

«Մենք առաջին անգամ եկե-
ղեցինք ունի մեր հանգուցեալ-
ները յիշատակեցինք, աղօթեցինք
անոնց համար: Ի հարկէ, ասիկա
շատ դրական զարգացում էր: Մենք
ստիպուած չենք ամէն դէպքի քա-
ղաքականութեան աչքերով նայիլ:
Ամէն ինչ նաեւ ունի մարդկային
կողմ: Կորսնցնելէ ետք մարդը չեւ
կրնար ետ բերել, սակայն կ'ուզես
զոնէ սուզը պահել: Մարդիկ պէտք
է յարգեն ուրիշի տառապանքները,
քանի որ ցաւը միայն կիսելով կը
նուազի, ուրախութիւնն ալ՝ կիսե-
լով կ'աւուելնայ», ըսած է պատրի-
արքը:

Հայոց պատրիարքը ի՞նչ ակն-
կալիքներ ունի հարցին ի պատաս-
խան՝ Մաշալեան նշած է. «Մեր
ակնկալիքը այն է, որ մար- դիկ
հասկնան հայ ժողովուրդին կո-
րուստները եւ տառապանքը: Մենք
այդ մասին գիտենք, քանի որ
ապրած ենք այդ ամէնը, սակայն
այս երկրին մէջ այդ ամէնուն
մասին շատ քան չեն գիտեր»:

Մաշալեան կարեւոր համա-
րած է ցեղասպանութեան իրական
պատճառներուն բացայայտումը՝
նշելով, որ ատիկա ապագան ապա-
հովազրելու նշանակութիւն պիտի
ունենայ:

«Շատ մեծ դաս է Սուրբիոյ մէջ
կատարուածը, երբ բարեկամաբար
ապրող ժողովուրդները յանկար-
ծակի սկսան իրար խեղդել: Այդ-
պիսի բան մըն ալ ապրեցան՝
Առաջին Համաշխարհային պատե-
րազմի տարիներուն՝ ամբողջ աշ-
խարհի ժողովուրդները: Ազգայ-
նականութեան հիմքը դրուեցաւ,
բոլորը ուզեցին իրենց ազգային
պետութիւնը ստեղծել: Եթէ ազգա-
յին պետութիւն պիտի ստեղծէք,
ուր արդէն իսկ բոլորը միասին
ապրած են, ուրեմն ի՞նչ պէտք է

ընէք մնացած ազգերուն հետ»,
ըսած է Մաշալեան:

«ՀԻՒՐԻՅԵԹ».- Ըստ ձեզի՞ ի՞նչ
է հայի ամայնքի կարեւորագոյն հար-
ցը:

ՍԱՀԱԿ ՊԱՏՐԻԱՐԻ.- Մեր
մեծագոյն հարցը ժողովրդագրու-
թիւնն է: Մեր բնակչութիւնը արագ
քայլերով կը նուազի: Ամէն 12
ծնունդի դիմաց 26 հոգի կը կորսնց-
նենք: Ահազանգող իրավիճակ է:

Մենք 82 միլիոննոց (Թուրքիոյ
բնակչութեան թիւը, որ արդէն 83
միլիոնի հասած է-իմք.) ծովուն
մէջ գտնուող սառցաբեկորի մը
նման ենք: Եւ կը հալինք: Արտա-
գաղթ ալ ունինք: Այս պահուն
Թուրքիոյ մէջ մեծագոյն ոչ-իսլամ
փոքրամասնութիւնն ենք՝ 50-60
հազար բնակչութեամբ: Սակայն
մեր աչքին առջեւ ունինք օրինակ
մը՝ Պոլսոյ մէջ յունական փոքրա-
մասնութեան թիւի նուազումն է,
որ այսօր 2 հազարէն ալ պակաս է:
«ՀԻՒՐԻՅԵԹ».- Բնակչու-
թեան նուազումն ացի ի՞նչ հարց
կայ:

ՍԱՀԱԿ ՊԱՏՐԻԱՐԻ.- Մեր
երկրորդ հարցը պաշտօնական կա-
նոնադրութեան բացակայութիւնն
է: Հանրապետութիւնը մեզի ոչ մէկ
կարգավիճակ տուած է: Տէ ֆաքթօ
գոյութիւն ունինք, այց օրէնքով՝
ո՛չ:

«ՀԻՒՐԻՅԵԹ».- Բայց արդեօք
Լոզանի պայմանագիրը չ'երաշխա-
ւորե՞ր ատիկա:

ՍԱՀԱԿ ՊԱՏՐԻԱՐԻ.- Լոզանը
կ'երաշխաւորէ մեր գոյութիւնը:
Սակայն ատոր ներքին կարգաւո-
րումները վերապահուած են Թուրք-

իոյ: Հայոց պատրիարքարան ձե-
ւակերպում որեւէ կերպ գոյու-
թիւն չունի: Այս վիճակը կը ստեղ-
ծէ շատ դժուարութիւններ, օրի-
նակ՝ դատարան մտնել, սեփակա-
նութիւն ունենալ: Նոյնիսկ այս
չէնքը (նկատի ունի պատրիարքու-
թեան շէնքը), որուն մէջ մենք կը
գտնուինք, պատրիարքարանին չի
պատկանիր, դիմացի եկեղեցւոյ կը
պատկանի: 38 եկեղեցի ունինք եւ
42 հիմնադրամ: Մեր 38 եկեղեցի-
ները 38 առանձին իշխանութիւն-
ներ են:

«ՀԻՒՐԻՅԵԹ».- Ձեր կարծիքով
մեր մօտ հակաքրիստոնէականու-
թիւն կա՞յ:

ՍԱՀԱԿ ՊԱՏՐԻԱՐԻ.- 100 տա-
րի առաջ, բնակչութեան մէկ եր-
րորդը քրիստոնէացի էր: Այժմ հա-
զարէն մէկը քրիստոնէացի է: Ձեր
կարծիքով հոս հակաքրիստոնէա-
կանութիւն չկա՞յ:

Մաշալեան մէջ երեք քրիս-
տոնէացի աւետարանիչներ սպանն-
ուեցան՝ 2 ժամ խոշտանգուելով:
Ըսին, որ իբր թէ անոնք Թուրքիան
քրիստոնէացի կը դարձնեն: Սուտեր
տարածեցին՝ ըսելով, որ երկրին
մէջ 23.000 եկեղեցի բացուած է:
Վախ տարածեցին, բայց այս կա-
ռավարութեան (էրտողանի գլխա-
ւորած) գալով գործերը քիչ մը
դիւրացան:

Serata Romantica in
Un'Atmosfera Italiana

Կազմակերպութեամբ ՀՄՄ Տիկնաց Միութեան
և
Նոր Սերունդ Մշակութային Միութեան

Ռոմանթիք Խնճոյքի Իտալական Երեկոյ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ 14 Փետրուար, 2020
Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
Մուտքի նուէր՝ \$75

Տեղերը ապահովելու համար՝
Հեռ. 626-485-6434, կամ 818-324-0574

Վայր՝ 1060 N. ALLEN AVE,
PASADENA, CA 91104

An unforgettable candlelight dinner

Յարգանքի Երեկոյ Ի Պատիւ Ասատուր Կիւզելեանի



Գ. ՄՈՒՆՅԵԱՆ

Իր տեսակին մէջ ինքնատիպ երեկոյ մըն էր որ տեղի ունեցաւ անցեալ Հինգշաբթի 6 Փետրուար, 2020, երեկոյեան ժամը 7:30ին Ազգային Առաջնորդարանի «Համբար» սրահին մէջ, ի պատիւ արհեստագործական արժանատիքներէն՝ Տիար Ասատուր Կիւզելեանի: Սոյն միջոցառումը կը հովանաւորէր Արեւմտեան Թեմի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, կազմակերպութեամբ Պէյլանի Հայրենակցական Միութեան եւ Հայկազի Կիլիկեան ձեռնարանի Մանուց Միութեան:

Ընտրանի հասարակութեան մէջ կը նշմարուէին առաջնորդ Յովնան Սրբազանի ներկայացուցիչ՝ Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեան, ինչպէս նաեւ գաղութիս մշակութային, հայրենակցական, բարեսիրական, մամուլի եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Օրուան հանդիսավարն էր ծանօթ արուեստագէտ՝ Յարութիւն Ֆօտուլեան: Ան սոյն միջոցառումը նախաձեռնող մարմնի անունով յայտնեց որ առողջական պատճառներով օրուան մեծարեալը չէր կրցած Լոնտոնէն գալ: Յ. Ֆօտուլեան ըսաւ թէ Ասատուր Կիւզելեանին նուիրուած այս ձեռնարկը՝ սովորականէն տարբեր է, քանի որ ոչ բանախօս ունի եւ ոչ ալ՝ գեղարուեստական յայտագիր: Այս բոլորը փոխարինաբար ներկայացուած է քիչ ետք ցուցադրուելիք եւ իր անձին ու գործունէութեան նուիրուած վաւերագրական ժապաւէնով մը, որ կը կոչուի «Մասնագիտութիւնը՝ մարդ»:

Երեկոյի հովանաւոր՝ Գերշ. Տ. Յովնան Արք. այդ օր մասնաւոր առաքելութեամբ Ս. Էջմիածին գտնուելուն պատճառով զինք կը ներկայացնէր Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեան: Այս առթիւ Տէր Մանուկ կարգաց առաջնորդ Յովնան Սրբազանի ողջոյնի գրութիւնը ուղղուած Ասատուր Կիւզելեանի, որուն մէջ բարձր կը գնահատուէր մեծարեալի բարեմասնութիւնները, որպէս բարերար, գրող, հասարակական գործիչ, ամբողջ կառչած Մայր Հայրենիքին, Մայր աթոռ Ս. Էջմիածնին, հայ մշակութիւն ու սրբազան ավանդութեանց որ «տասնամեակներով լուսաւորած ու ներշնչած էք սերունդներու հոգին ու միտքը: Ձեր արթնամտութիւնն ու բացառիկ իստիպատութիւնը մշտապէս գօտեպնդած է բոլորս նորին ու ազնիւին գիտակցութեամբ: Մեր


մաղթանքն ու աղօթքն է առ Աստուած որ դուք մնաք քաջաւորող ու դեռ երկար տարիներ խանդավառէք մեր ժողովուրդի զաւակունք Ձեր պայծառ տեսիլքներով ու մշտապէս նոր արշալոյսներ կերտելու ճարտար տրամադրութեամբ»:

Այս առթիւ՝ Ասատուր Կիւզելեանի ուղղուած գնահատանքի եւ ողջոյնի խօսքերով ելոյթներ ունեցան Պէյլանի Հայրենակցական Միութեան ատենապետ՝ Մանուկ Տոնոյեան, Հ.Բ.Ը.Մ.ի Հայ Երիտասարդաց Միութեան անունով՝ Ենովք Պալիկեան եւ Կիլիկեան Բարեգործական Միութեան անունով՝ ձորձ Մատոյեան: Իսկ Ասատուր Կիւզելեանի անունով շնորհակալական խօսքով եւ յուշապատումներով ելոյթ ունեցաւ իր երբեմնի ընկերներէն՝ Հ.Մ.Մ.ի ու Պէյլանցիներուն ղեկավարներէն Տիգրան Սարաֆեան:

Ելոյթներու աւարտին՝ ներկաները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին Ասատուր Կիւզելեանի նուիրուած «Մասնագիտութիւնը՝ մարդ» փաստավաւերագրական ժապաւէնը: Աւելի քան մէկ ժամ տեւող սոյն ֆիլմի ցուցադրութեան ընթացքին՝ Ասատուր Կիւզելեան անձամբ պատմեց իր ինքնակենսագրութեան խիստ հետաքրքրական դրուագները, մանկութեան դժբախտ տարիները, ուսանիլը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի դպրեւանքը, ուսուցչութիւնը Կալկաթայի (Հնդկաստան) մարդասիրական ձեռնարանին մէջ, ամուսնութիւնը շնորհազարդ հայուհի Վիվիանի հետ: Հետաքրքրական էր իր ուղեւորութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ Հնդկաստան կատարած այցի ընթացքին (որպէս թարգմանիչ), ինչպէս նաեւ յիշարժան հանդիպումները Արամ Խաչատուրեանի հետ (Լոնտոն տուած այցի ժամանակ), Լարի Ատլըրի հետ (բերնի հարմոնիզացի մեծ վարպետ, որուն համար յատուկ եղանակ յօրինած է Արամ Խաչատուրեան), Ռուզվելթի, Չրչիլի եւ Ստալինի կեանքը փրկող K.G.B.-ի գործակալներ Գոհար եւ Գէորգ Վարդանեաններու եւ բազմաթիւ այլ ակնաւոր մարդոց հետ: Ֆիլմն աւելի հետաքրքրական դարձած է պատմավաւերագրական լուսանկարներով եւ փաստագրական հին ժապաւէններէն առնուած հատուածներով:

Ներկաները մեծ բաւարարութեամբ ու իրաւ հայու հպարտութեամբ մեկնեցան սրահէն իրենց հետ տանելով Ասատուր Կիւզելեանի հետաքրքրական կեանքի ապրուած դրուագները ու յատկապէս այն տպաւորութիւններով որ իսկապէս իր «Մասնագիտութիւնը՝

Հայաստանի Մէջ Պիտի Յուցադրուի Տալիի Եւ Փիքասոյի Աւելի Քան 200 Աշխատանք



Քսաներորդ դարու սպանացի մեծանուն նկարիչներ Սալուատոր Տալիի եւ Փապլո Փիքասոյի բացառիկ ստեղծագործութիւնները Հայաստան պիտի բերէ «Art of the Nations» ֆոնտը:

Սիւրուէալիզմի (գերիբապաշտութեան) ակնաւոր ներկայացուցիչներու ցուցահանդէսը պիտի բացուի Հայաստանի ազգային պատկերասրահին մէջ:

«Արմենբրես»-ի թղթակցի հետ զրոյցի ժամանակ «Art of the Nations» ֆոնտի տնօրէն Եարոսլաւ Շատրինն ըսած է, որ Հայաստանի ազգային պատկերասրահին մէջ պիտի ցուցադրեն Տալիի եւ Փիքասոյի քանդակները, սերամիքական եւ կրաֆիքական աշխատանքները:

«Արդէն պատկերասրահի հետ համաձայնագիր ունինք, եւ մօտակայ օրերս պաշտօնապէս պիտի յայտարարենք ցուցահանդէսի ման-

րամասները», - շեշտած է Շատրինը:

Անոր խօսքով՝ ցուցահանդէսին ընդգրկուած է երկու մեծերու աւելի քան 200 աշխատանք: «Այն այցելուներու համար բաց պիտի ըլլայ մի քանի ամիս», - շեշտած է ֆոնտի տնօրէնը:

Առիթով մը Շատրինն ըսած է, որ Տալիի բարդ է, բարի, նուրբ ու լի կասկածներով: «Փիքասոյի կերպարն ինձի աւելի հարազատ է: Մեր տան մէջ անոր քանի մը աշխատանք կար: Կարծես տան մէջ եւս մէկ տղամարդ յայտնուած էր՝ ու ժով լի, զօրաւոր: Ես չհանդուրժեցի եւ պատէն հանեցի այդ ստեղծագործութիւնները», - խոստովանած է ֆոնտի տնօրէնը:

«Art of the Nations» ֆոնտի հաւաքածուն կը համարուի աշխարհի մէջ չորրորդն իր մեծութեամբ:

այս ֆիլմին մէջ:

Քաջաւորողութեան եւ երկար ու արդիւնաւէտ տարիներու ամենաշերմ բարեմաղթութիւններով:

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION

SAVE THE DATE

Spring Brunch

Benefiting the
AEBU Scholarship Fund

Sunday
March 22, 2020
AEBU Center - Pasadena

Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի 57-րդ Պատգամաւորական Ժողովի Յայտարարութիւնը



Ս.Դ.Հ.Կ-ի Լիբանանի Շրջանի 8 մասնաճիւղերը ներկայացնող շուրջ 42 պատգամաւորներու մասնակցութեամբ գումարուեցաւ Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի 57-րդ Պատգամաւորական Ժողովը, ներկայութեամբ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին:

Կուսակցաշէն միջոցառումները քննարկուեցան քաղաքական եւ ազգային թղթածրարներ, յարակից միութիւններու իրավիճակը եւ կուսակցական ներքին կառուցային հարցեր:

Քաղաքական օրակարգի ընթացքին, ժողովականները ողջունեցին Լիբանանի մէջ 17 Հոկտեմբերին ծայր առած ժողովրդային բողոքի շարժումներն ու ցույցերը, անոնց տուն տուող պահանջները համարելով արդարացի, պայմանաւոր անոնք մնան քաղաքակիրթ ձեւով: Ժողովականները կողմնակցեցին պատասխանատուութեան կանչելու բոլոր անոնք, որոնք տասնամեակներ շարունակ մսխեցին եւ կամ թալանեցին պետական եկամուտները, երկիրը հասցնելով անանկութեան եզրին:

Ստեղծուած խառնաշփոթ վիճակէն դուրս գալու համար, դատական անկախ համակարգի եւ ստատեւական կորուստի միջոցառումներ ձեռնարկելու, ինչպէս նաեւ երկրին մէջ տիրող փտածութիւնը կանխարգիլելու կողքին, ժողովականները խորհրդարանական կանխահաս ընտրութեան կայացումը համարեցին անհրաժեշտ քայլ մը, դուրս գալու համար քաղաքական անորոշ կացութենէն, պայմանաւոր արդար օրէնքի մը հիման վրայ:

Ազգային առումով, ժողովականները դիտել տուին, որ իբրեւանահայ գաղութը զգալի նահանջի մէջ է, յատկապէս վերջին չորս ամսուան ընթացքին: Ակնյայտ է

սեփական թէ ազգային կառուցներու յետքայլը, որ գաղութին մէջ ստեղծած է մտահոգիչ եւ խուճապի միջոցառում: Ժողովականները որոշեցին ամէն գնով աշխատանք տանիլ, բարեկարգելու:

Համար լիբանանահայ գաղութին մէջ տիրող այս վիճակը:

Անոնք ցաւ յայտնեցին նոյնիսկ այս դժուար վիճակին մէջ ծառայած մարտահրաւէրները դիմագրաւելու համար ազգային լիբերալ միասնականութեան բացակայութեան համար, այնուամենայնիւ ժողովականները ողջունեցին լիբանանահայ երեք յարանուանութիւններու հոգատար վերաբերմունքը համայնքին նկատմամբ:

Ժողովի ընթացքին կայացուցան ներքին կուսակցական կառուցը արդիականացնելու առնչութեամբ կարգ մը որոշումներ: Ենչտարբերեցաւ նաեւ ընկերային ծառայութեան որոտի կարեւորութիւնը, աջակցելու համար գաղութի գաւազներուն:

Երկրի անկայուն վիճակին պատճառով համատարած դարձած արտագաղթի երեւոյթը եւս քննարկումի առարկայ դարձաւ. ժողովականները բարեբախտութիւն համարեցին, սակայն, որ արտագաղթող լիբանանահայ ընտանիքներուն մեծամասնութիւնը կը տեղափոխուի Հայքնիք, գալն համարելով ճիշդ որոշում, մաղթելով, որ Հայաստանի իշխանութիւնները համապատասխան աջակցութիւն ցուցաբերեն այդ ընտանիքներուն:

Ժողովը իր վերջին օրակարգով ընտրեց Լիբանանի Շրջանի նոր վարիչ Մարմինը, ատենապետութեամբ պետական նախկին երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալիաբեանի:

Ս.Դ.Հ.Կ. ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱՎՈՐ ՄԱՐՄԻՆ Պէյրուս

Հրապարակուած է Սեւակ Պալըքճրի Սպանութեան Գործի Վերջնական Վճիռը



24 Ապրիլ 2011-ին՝ իր պարտադիր բանակային ծառայութեան աւարտին մօտեցող օրերուն սպանուած էր Սեւակ Պալըքճը:

Դատարանը վերջերս դիտումնաւոր մարդասպանութեան մեղադրանքով 16 տարի 8 ամիս բանտարկութիւն վճռած էր ոճրագործին դէմ: Հրատարակուած դատավճիռին պատճառաբանութեան մէջ, դատարանը մանրամասնօրէն կը քննարկէ անգոյշութեան կամ դիտումնաւոր մարդասպանութեան երեւոյթները: Դատարանը, նկատի ունենալով, որ նախապէս որոշ թշնամութիւն մը գոյութիւն չէր ունեցած ոճրագործին եւ գոհին միջեւ, վճիռը տուած է հաւանական նպատակադրութեամբ մարդասպանութեան հիման վրայ: Դատարանը անգամ մը եւս բնութագրած է դէպքին մանրամասնութիւնները եւ հաստատած, որ անկարելի է գէշքին ինքնակրակումը, բայց նկատի ունենալով ոճրագործին եւ գոհին միջեւ նախապէս թշնամութեան մը գոյութիւն չունենալը, համոզուած է, որ դէպքը ոչ թէ դիտումնաւոր ոճրագործութիւն էր, այլ՝ անգոյշութեան հետեւանքով կատարուած մարդասպանութիւն:

Նշենք, որ դատարանը նախապէս արկած համարած էր կատարուածը եւ շատ աւելի նուազ պատիժ տնօրինած: Այդ ոճիրին դէմ Պալըքճը ընտանիքին փաստաբանները առարկած էին եւ անոր հիման վրայ դատավարութիւնը կրկնուած էր:

Գանատահայոց Թեմի Թեմական Խորհուրդի Յայտարարութիւնը

30 Յունուար 2020-ին, Գանատահայոց Թեմի Թեմական Խորհուրդն իր ժողովի ընթացքին քննարկեց Մեծի Տանն Կիլիկիոյ ներկայացուցիչներու կողմէն ձեռնարկուած կանոնազանց արարքներու պատճառով ստեղծուած ցաւալի իրավիճակը? ստեղծելով Օնթարիոյ, Ուինսթըր քաղաքի մէջ, նոր ծուխ մը Մեծի Տանն Կիլիկիոյ իրաւասութիւններու ներքոյ, երբ այնտեղ գոյութիւն ունի Գանատահայոց Թեմէն ներսի պատշաճի ձեւաւորուած ծուխ, որ ստեղծուած է շուրջ 27 տարի առաջ:

Թեմական Խորհուրդը սոյն յայտարարութեամբ կու գայ արտայայտելու իր սաստիկ զայրոյթն ու Մեծի Տանն Կիլիկիոյ



ներկայացուցիչներէն կ'ակնկալէ նկատի ունենալ հարցի լրջութիւնը եւ ուղղել կանոնազանց ցուցումը:

Թեմական Դասախօսը Իրանի Լաւագոյն Դասախօսներու Շարքին

Գաղտնիք չէ, որ հայագրի մասնագէտները աշխարհի մէջ մշտապէս հեղինակաւոր վարկ ունեցողներն են: Պարբերաբար անոնք իրենց մասնագիտական յաջողութիւններով բարձր կը պահեն հայերու կարողութիւններու եւ հնարաւորութիւններու սանդղակը? դառնալով հպարտութեան առիթ:

Նմանօրինակ հաճելի միջադէպ գրանցուած է իրանի մէջ: Այնտեղ տեղի ունեցած է դասախօսներու զնահատման արարողութիւն եւ երկրի 19 դասախօսներ ճանչցուած են որպէս իրանի լաւագոյն դասախօսներ՝ արժանանալով պետական բարձր պարգեւներու: Այդ 19 դասախօսներու շարքին



իր պատուաւոր տեղն ունի իրանահայ դասախօս Գէորգ Կարապետեանը, որ կը դասաւանդէ Թեհրանի «Ամիր Բապիւր» պետական համալսարանէն ներս: Ան համալսարանի ելեկտրական արհեստագիտութեան ամպլոնի փրոֆեսոր է:

ՀԲԸՄ ՍԱԹԱՄԵԱՆ
 ՌԵՍՏՈՐԱՆԻՍԻՍ
 AGBU SATAMIAN THEATRE GROUP

Մամլոյ հաղորդակցութիւն

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Գրիգոր Սաթամեան Թատերախումբի վարչութիւնը որոշում կայացուց ընդլայնել թատերախումբը նոր եւ երիտասարդ ուժեր աւելցնելով անոր շարքերուն:

Ուստի, աճող որոնք հետաքրքրուած են կամ դերեր վերցնելու եւ կամ ալ քուլիսային թեքնիք աշխատանքով մաս կազմելու թատերախումբին, ինչպէս բեմավարում, տեքորի շինութիւն, լուսատարում, երաժշտութիւն, շապրում, հագուստ, եւ այլն, թող բարեհաճին հետաձայնել միութեան գրասենեակը (626)794-7942 եւ կամ e-mail ընեմ satam40@gmail.com եւ իրենց պատրաստակամութիւնը յայտնել թատերախումբի Գեղարուեստական Ղեկավար, Գրիգոր Սաթամեանին:

Գրիգոր Սաթամեան
 Թատերախումբի վարչութիւն

Massis Weekly

Volume 40, No. 5

Saturday, February 15, 2020

Armenia to Hold Referendum on Constitutional Amendments on April 5



YEREVAN — The President of Armenia Armen Sarkissian has signed a decree on scheduling the referendum on Constitutional amendments for April 5.

The decree is based on February 6th decision of the National Assembly to put the draft amendments to the Constitution on a referendum and complies with Article 12.1 of the Law on Referendum.

The decree comes into force the day after its publication.

Under the proposed amendments, the Constitutional court's chairman, Hrayr Tovmasyan, and six other members installed by former Armenian governments would be replaced by other

judges to be confirmed by the current parliament controlled by My Step ruling party.

PM Nikol Pashinyan wrote on his Facebook page welcoming the President's signing.

"We will say 'yes' to the revolution, to freedom and to bright future on April 5, and will slam the door in the face of corruption", he wrote.

The Central Electoral Commission of Armenia approved the timetable of main events for organizing and holding the referendum on Constitutional amendments scheduled on April 5.

According to the timetable, the referendum campaign will launch on February 17.

King Abdullah of Jordan In a Historic Visit to Armenia



YEREVAN -- Jordan's King Abdullah spoke of similarities between his country and Armenia, voiced support for closer bilateral ties and praised the centuries-old Armenian presence in the Middle East during an official visit to Yerevan on Tuesday.

He also called for Armenian support for his position on the status of Jerusalem after holding separate talks with President Armen Sarkissian and Prime Minister Nikol Pashinyan.

Both Armenian leaders described Abdullah's first-ever visit to their country as "historic" during the talks that seemed to have focused on ways of boosting Armenian-Jordanian economic ties. Sarkissian was satisfied with the "wonderful discussions with His Majesty."

cooperating to capitalize on this promising potential."

"Although this is our first official visit to your beautiful country, we feel we are among family, and in fact we are family," he declared.

Abdullah went on to lavish praise on Jordan's Armenian community. "Thousands of Jordanians trace their roots back to Armenia," he said. "They do honor to both of our countries and play vital roles in the arts, education, public service, business and much, much more. And they form the solid bedrock on which our friendship continues to grow and flourish."

The community mainly consists of descendants of survivors of the 1915 Armenian genocide in Ottoman Turkey who had taken refuge in what

FM Mnatsakanyan Presents Reform Process to EU Ambassadors



YEREVAN -- Foreign Minister of Armenia Zohrab Mnatsakanyan held a traditional meeting with the Head of the EU Delegation to Armenia and the Ambassadors of the EU member states accredited in Armenia, reported the press service of the MFA Armenia.

The interlocutors exchanged views on challenges and ways to solve them in the context of global and regional developments.

In the context of Armenia-EU partnership, the sides referred to the

implementation process of the Armenia EU Comprehensive and Enhanced Partnership Agreement.

Յիշատակարաններու գլխաւոր արժէքը կը կախնայ այն պատմական իրողութեան մէջ երբ անոնք յաճախ անձնական գրութիւններ ըլլալով ականատեսի կամ ականջալուրի վկայութիւններ կը հանդիսանան՝ արձանագրուած ձեռագիրներու վերջաւորութեան: Զայնոնք «մոզայիկի գոյնգոյն քարերու» կը նմանցնէ Գարեգին Կաթողիկոս «իրենց բազմատեսակ մանր տեղեկութիւններով», որոնց ի մի հաւաքելը, թուականներու եւ վայրերու դասակարգումը ճշդելը, պատմութեան կ'ընծայէ կորսուած դէպքերու եւ չչիշուած տեղերու եւ անտուններու անփոխարինելի նիւթեր: Հատորին արժանիքներէն մին է նաեւ գեղարուեստական արժէք ներկայացնող մանրանկարներու 48 վերարտադրութիւնները: Իսկ ծանօթագրութիւններու շարքին կան բազմաթիւ անծանօթ եւ կամ օտար տիտղոսներ, որոնց ամենայն բծախնդրութեամբ Գարեգին Հայրապետ կը մօտենայ ստուգաբանելով իւրաքանչիւրը:

Աշխատանքին Շարունակութիւնը

Ինչպէս ըսուեցաւ «Յիշատակարանք Ձեռագրաց» հատորը երկու ժամանակաշրջաններու ընթացքին գիրար լրացուցած խմբաւորումներ են: Վեհափառ Հայրապետը իրեն գիտական աշխատակից նշանակեց Դպրեվանքի մեր գրաբարի եւ մատենագրութեան դասախօսներէն Սիմոն Սիմոնեան որ 1946 Յուլիսին գործի լծուեցաւ հսկելու եւ լրացնելու մատենագիտական պրպտումները:

Սիմոնեանի վկայութեամբ «Վեհափառ Հայրապետը իր հատորին մէջ չէր առնէր որեւէ յիշատակարան առանց նպատակի, առանց ընտրութեան, եւ յատկապէս առանց գրչագրական, մանրանկարչական ու պատմագիտական արժէք նկատելու»: Սոյն ակնարկէն իսկոյն կը յայտնուէր Գարեգին Կաթողիկոսի մասնագիտական մօտեցումը: 1934 թուականէն ետքն էր երբ Գարեգին Հայրապետ Տ.Տ. Խորէն Ա Մուրատբեկեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Նուիրակի պաշտօնով արտասահման կը գտնուէր, իր այցելութիւններու ընթացքին փնտռած է եւ տեսած բազմաթիւ ձեռագիրներ՝ Միացեալ Նահանգաց Ամերիկայի, Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի կեդ-

րոններուն մէջ, որոնցմէ գրի առած է իր մօտ պակասող յիշատակարանները:

Երուսաղէմ՝ Գիտական Այցելութիւն

Գարեգին Հայրապետ հարկ էր անգամ մը եւս անձամբ Երուսաղէմ այցելելու ձեռագիրներու ուսումնասիրութեան եւ յիշատակարաններու ընդօրինակութեան համար 1947 թուի ամրան: Իր չորրորդ գիտական այցելութիւնը կ'ըլլար այս մէկը դէպի Երուսաղէմ իր յառաջացեալ տարիքին, այս անգամ որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: Իրեն կ'ընկերանային գիտական իր աշխատակիցը Սիմոն Սիմոնեան եւ Թորոնթո աբեղայ Փոստաճեան՝ իր գաւազանակիրը: Երուսաղէմի մէջ Գարեգին Վեհափառ Սրբոց Յակոբ-եանց վանքի 4000-ի հասնող ձեռագիրներէն ոմանք ի նորոյ քննած է Սիմոնեանի հետ, եւ Թորոնթո աբեղայ Փոստաճեանի ընդօրինակել տուած է ա'յն յիշատակարանները գորս հարկ տեսած էր իր 40 օրերու կեցութեան շրջանին:

Բովանդակութիւնը

Հատորը կը բովանդակէ 458 անհատ ձեռագիրներու յիշատակարաններ: Վերջաւորութեան՝ յաւելուածներ, տեղանուններու եւ անձնանուններու բարդ եւ բծախնդիր ցուցակներ: Հակառակ իր ութսունամեայ տարիքին Գարեգին Հայրապետ անձապէս կատարած է ընտրութիւնն ու դասակարգումը իր 1934 թուականէն առաջ հաւաքած, եւ յետագային մինչեւ 1948 աւելցուցած ձեռագրեալ եւ հրատարակեալ յիշատակարաններուն: Կոթողային այս հատորը արտաշխարհի մէջ միակը կը հանդիսանար, երբ Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէն Փրոնֆ. Լեւոն Խաչիկեան նոյնքան արժեքաւոր եւ աւելի համապարփակ Մատենադարանի «ԺԴ-ԺԵ Դարերու Ձեռագիր-ներուն Յիշատակարանները» երկու հատորներով կը հրատարակէր երկու տարի ետք: Բոլորը միասին կը կազմեն հոյակապ ամբողջութիւն մը որպէս աղբիւր անյայտ դէմքերու եւ դէպքերու:

Սիրարփի Տէր Ներսէսեանի Վկայութիւնը

Վեհափառ Հայրապետի հիացող բանասէր գիտնական Սիրարփի Տէր Ներսէսեան «Յիշատակարանք Ձեռագրաց» հատորի մասին գրած իր գրախօսականով «Ամբողջ կեանքի մը երկար աշխատանքին արդիւնքը» կը տեսնէր կոթողային այդ աշխատութեան մէջ, ուր կարեւոր յատկանիշներ կ'առանձնացնէին Գարեգին Հայրապետը ու կը գատորոշէին զինք նման այլ հրատարակութեանց բաղդատմամբ: Անոնք ինքնին առանձին յօդուածներ են նոյնիսկ, ինքնատիպ ուսումնասիրութիւններ, որոնք «Բացատրական յաւելուածներ ըլլալով այս մեծ հաւաքածոն դարձուցած են հայ մշակույթի յատուկ աղբիւրագիտութիւն: Գիտնական Տէր Ներսէսեան կը յատկանշէ թէ «հեղինակին լայն գիտութիւնը կը յայտնուի ամենափոքր զիտողութիւններու մէջ՝ իր աւելցուցած բացատրութիւններով»:

Կամրջելով Պատմութիւններ



ԱՆՈՒՇ ԹՐՈՒՄՆՑ

Հայ եւ թուրք խումբ մը լուսանկարիչներ կրկին միասին ցուցահանդէս ունեցած են. Երեւանի եւ Իսթանպուլի մէջ միեւնոյն ատեն նոյն ցուցահանդէսը բացուած է: Երեւանի մէջ՝ Նորարար փորձառական արուեստի կեդրոնին, իսկ Իսթանպուլի մէջ՝ UNIG ցուցասրահին մէջ: «Կամրջելով պատմութիւնները» խորագրով առաջին ցուցահանդէսին Պոլսոյ Ժամանակ օրաթերթը 2017-ին անդրադարձած էր:

Հայաստանի մօտ Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպանատան հովանիին ներքոյ իրականացուող այս նախագիծը կը համախմբէ աւելի քան քսան հայ եւ թուրք լուսանկարիչներ, որոնք նախապէս, աշխատանոց մը ունենալով, իրենց երկիրներուն պարզ ու առօրեայ կեանքը ներկայացնող դրուագներ կը նկարեն եւ աշխատանքներու աւարտին լաւագոյն լուսանկարներով ցուցահանդէս կը կազմակերպեն: 2017-ին կայացած ցուցահանդէսին բոլոր լուսանկարները տեղ գտած են գիրքի մը մէջ:

Այս տարուան ցուցահանդէսին ներկայացուած էին Հայաստանէն եւ Թուրքիայէն քսան երիտասարդ լուսանկարիչներու լուսանկարներ: Աշխատանոցը տեղի ունեցած է 2019-ի օգոստոսին՝ Հայաստանի Դիլիջան քաղաքին մէջ, ուր

երիտասարդները ծանօթացած են լուսանկարչութեամբ պատմութիւն պատմելու հնարաւորութիւններուն, ընկերային ցանցերու միջոցաւ գանձեր տարածելու եւ աւելի շատ լսարաններու հասցնելու միջոցներուն: Այս անգամ աշխատանքները վարած են հայաստանցի նշանաւոր լուսանկարչուհի Անուշ Պապաճանեան, «Նէշընըլ ձէոկրաֆիք»-ի լուսանկարիչ ձոն Սթենմայքըր, իսկ Թուրքիայէն՝ Սապիհմա Չիմէն:

Փորձելով ներկայացնել երկու երկիրներու՝ Թուրքիոյ եւ Հայաստանի մանաւանդ նմանութիւնները, ցուցահանդէսի մասնակիցները շեշտը դրած են խաղող համակեցութեան, ժողովուրդներուն միջեւ եղած երկխօսութեան եւ գիրար հասկնալու անհրաժեշտութեան վրայ: Ինչպէս ցուցահանդէսի բացման ըսաւ Հայաստանի մօտ ԱՄՆ-ի դեսպան Լին Մ. Թրէյսի. «Ճամբորդութեան ընթացքին կը հասկնամ, որ մարդոց ընդհանրութիւնները աւելի շատ են, քան՝ տարբերութիւնները: Ուրախ եմ, որ ծրագրի հայ եւ թուրք տաղանդաւոր մասնակիցները կարողացած են որսալ ճիշդ այդ միաւորող պահերն ու ընդհանրութիւնները»:

Թուրքիոյ մասնակիցներէն Թոփրաք Քարաքայան իր տպաւորութիւնները յայտնելով ըսաւ. «Մեր երկու երկիրներուն մշա-

Մի Կերպ Եղա Ենք Գնում

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմը բնութագրող կարեւորագոյն ֆիլմերէն մէկը կը համարուի «Փրկել շարքային Ռայնը»: Սթիվըն Շփիլպէրկի ֆիլմը մեծ յաջողութեամբ կը ցոլացնէր պատերազմի սարսափը եւ անիմաստութիւնը: Հոն կը պատմուէր երեք որդիները զոհ տուած մօր մը չորրորդ որդին փրկելու համար կատարուած աշխատութիւնները:

Նման բնույթով հայկական ֆիլմ մըն էր Ալպերթ Մկրտիչեանի «Հին օրերի երգը», ուր նամակաբեր Նիքոլի դերին մէջ Մհեր Մկրտիչեան կը մերժէր նոյն մօր չորրորդ որդու մահուան գոյժը՝ «Սեւ գիր»-ը յանձնել: Ան ճարահատութեան մէջ նախ դիմեց իր շուրջիներուն, հարցնելով «դուն սեւ թուղթ կրնա՞ս տանիլ», եւ ապա սկսաւ ծածմել այդ անիծեալ նամակը:

Պատերազմը՝ որ ինքնին զանգուածային մարդասպանութիւն է, որ քան ալ կանոններով սահմանուի, չունի, բացարձակապէս չունի տրամաբանական բացատրութիւն:

Շփիլպէրկի ֆիլմը մեծ յաջողութեամբ կը նկարագրէր պատերազմի անտրամաբանական եւ աւելին անմարդկային երեսակը: Հրամանատարներ, երբ որոշած էին Նորմանտիայի ծովեզերքով ցամաք ելլել, արդէն հաշուած էին նաեւ կայանալիք մեծ կորուստը: Կանխաւ գիտէին թէ իրենց զրկած բազմահազար զինուորներէն հազիւ չնչին մնացորդաց մըն է, որ պիտի հասնի նպատակին:

Թուրքիա նոյն շաբթուայ ընթացքին ցնցուեցաւ երկու դէպքերով: Առաջինը պատահեցաւ Սուրիոյ Իտլիպ քաղաքի մէջ, երբ Սուրիոյ զօրքի յառաջընթացով մահացաւ 8 զինուոր: Նախագահ էրտողան քանի մը ժամ անց յայտարարեց թէ փոխարձակ յարձակումով չէզոքացուած է հակառակորդի կողմէն 30-35 տարր:

Էրտողանի «տարր» կոչածները մարդիկ էին, երիտասարդ մարդիկ: Մարդիկ՝ որոնք ընտանիք ունէին իրենց ետին, ծնողներ, սիրածներ, քոյրեր, եղբայրներ կամ զաւակներ: Ունէին նաեւ երագանք-

ներ, ակնկալութիւններ, յոյսեր, սպասումներ:

Ներքին քաղաքական քաշքշուքի մէջ ոչ ոք անդրադարձաւ մարդկային կորուստներուն: Ոմանց համար առիթ մը գոյացած էր նահատակի նիւթով նոր ձառեր խօսելու, ոմանց համար ալ իշխանութիւնը անխնայ քննադատելու:

Տակաւին հազիւ շաբաթ մը անցած էր կործանիչ երկրաշարժէն այս կողմ, ուր դարձեալ հաւաքականութեան համեստ խաւին պատկանող քանի մը տասնեակ մարդիկ գոհուեցան իրենց խարխուլ տուներու փլատակներուն տակ:

Կատարեալ խայտառակութիւն մըն էր օգնութեան փութացող ինքնաշարժներուն քաղաք մուտքը արգիլել, պատրուակելով թէ անոնք եկած են քրտաբնակ քաղաքներէ: Այս քանի իսկ բաւական է վերատեսութեան մատնելու «անջատողական» բառը: Գիտենք որ իշխանութիւնները այս երկրին մէջ ընդմիջտ այս բառով կը դատապարտեն իրենց ազգային ինքնութեան ճանաչումը պահանջողները: Բայց յստակ է թէ բուն անջատողականութիւնը նոյնիսկ հանրապետութեան հիմնադրութեան տարիներէն բոյն դրած է երկրի իշխանութիւններու մտքին մէջ:

Յ Փետրուարի առաւօտեան ժամերուն վերահասու եղանք վանի Մոկա (Պահչէսարայ) գաւառի մէջ մարդատար ինքնաշարժի մը ձիւնակոյտի տակ մնալուն: Օրուայ ընթացքին հետեւեցանք փրկարար աշխատութիւններուն: Այդ աշխատութիւնները կէսգիշերուայ ժամերուն կանգ առին, երբ արդէն յոյս չէր մնացած կենդանի մէկը փրկելու համար: Իսկ յաջորդ առաւօտ վերսկսող փրկարար աշխատութիւններու ընթացքին կրկին անգամ ձիւնահոսք տեղի ունեցաւ եւ այս անգամ ձիւնակոյտի տակ խեղդամահ եղան աւելի քան 30 փրկարարներ, որոնք մեծ կորովով կեւաշխատէին աղէտեալ երկու դիակները գտնելու եւ դուրս բերելու համար:

Դատական մասնագէտները իր սպանութեան մեղքը բեռցուցեր են Պերքին Էլվանին, անգորջ գտնուելու մեղադրանքով:

Տրամաբանութիւն ըսի՞ք:

Շար.ը էջ 19

INNOVATIVE

Designs Manufacturing, Inc.

idmifurnishings.com

Տղամարդոց Հոգեբանութան Գաղտնիքներ, Որոնց Իմացութիւնը Կը Դիւրացնէ Ձեր Կեանքը

Ան լրացուցիչ դաստիարակութեան կարիք չունի՝ Մինչեւ չափահաս դառնալը տղամարդը արդէն կը հասցնէ նմանիլ պահածոյի: Քանի մը տարի անց անոր կերպարն ու անձը վերջնականապէս կը ձևաւորուին: Այնպէս որ դուք, ամենայն հաւանականութեամբ, անոր կը հանդիպիք արդէն պատրաստ, ձևաւորուած վիճակի մէջ՝ ձեր առջեւ իբրեւ կանոն կ'ըլլայ մէկը, որ կրնայ մաքրութիւն ընել, աղբը թափել, միացնել լուացքի մեքենան ու նոյնիսկ ապուր եփել: Պէտք է փճացնել զինք, հակառակ պարագային 10-20 տարի ետք դուք պիտի ստանաք անօգնական արարած մը, որ ունակ է առանց կողմնակի օգնութեան վերնաշապիկը տարբերելու տաքատէն կամ խոհանոցի մէջ զաւաթը գտնելու: Պէտք է անոր երեխայի տեղ դնել, որ մինչեւ ձեզի հանդիպիլը չէր գիտեր ինչպէս պահել իրեն սեղանի շուրջ ու ինչպէս շփուիլ ընկերներու հետ:

Ամէն քայլափոխի անոր ցուցմունքներ ու խրատներ մի տաք: Հաշուի առէք, որ մինչեւ ձեր յարաբերութիւնները ան արդէն կուտակած էր կեանքի որոշ փորձ՝ սովորութիւններ ու նախասիրութիւններ, իսկ յետոյ կը յայտնուիք դուք ու կը սկսիք անոր սորվեցնել առողջ կենսակերպի կանոնները: Յարգեցէք անոր կենսակերպը, անոր հետաքրքրութիւնները ու ամէն ինչ ձգեցէք այնպէս, ինչպէս որ կայ:

Անոր համար դժուար է ընտրութիւն կատարել ձեր ու իր կեանքի միւս կանանց միջեւ՝ Միայն մի տխրիք, որ դուք անոր կեանքին մէջ առաջին ու միակ կ'ընէք: Ոչ ալ երկրորդը: Ձեզմէ առաջ ան ունեցած է մայր, հաւանաբար դուստր՝ նախորդ ամուսնութենէն, քոյր, ընկերուհի, նախկին սիրուհի եւ այլն:

Ան կ'ուզէ բոլորին հետ ջերմ յարաբերութիւններ պահպանել:

Անոր վերջնազոր մի ներկայացնէք «Կա՛մ ես, կա՛մ ան» տրամաբանութեամբ: Տղամարդը հնարաւոր ամէն ինչ կ'ընէ երկուքդ ալ

պահելու համար, բայց ստոր համար ան հաւանաբար ստիպուած պիտի ըլլայ ստելու: Յատուկ թեմա է մօր հանդէպ սէրը: Նոյնիսկ եթէ ան ձեզի վհուկ կը թուի, ատիկա ձեզի իրաւունք չի տար անոր թշնամաբար վերաբերուելու եւ զայն վատաբանելու ձեր ամուսինին ներկայութեամբ: Ձեր ամուսինը կ'երագէ, որ դուք ընկերանաք, կամ գոնէ չգանգատիք իրարմէ:

Անոր համար հաճելի է նուէրներ ստանալ՝ Հաւանաբար դուք կը կարծէք, թէ կ'երջանկացնէք տղամարդը միայն ձեր ներկայութեամբ ու անոր երեխաներ պարգեւելով: Բայց իրականութեան մէջ տղամարդու համար ալ հաճելի է ժամանակ առ ժամանակ ստանալ նուէրներ, անակնկալներ: Այնպէս որ ազատեցէք այն կարծրատիպէն, որ նուէրներ միայն կանայք կը սիրեն:

Ան ինքը գիտէ, թէ ինչով կ'ուզէ զբաղիլ՝ Երբ կ'ընէ կը տեսնէ, որ տղամարդը անգործ նստած է ու կը հանգստանայ՝ ան անմիջապէս կը սկսի տղամարդուն հարցերու տարափ ուղղել՝ Ի՞նչ կը մտածէ, ինչո՞ւ անտրամադիր է, յետոյ կ'առաջարկէ երթալ որեւէ տեղ, կամ օգնել մաքրութիւն ընելուն: Ինչո՞ւ կը թուի, թէ տղամարդը ինքնուրոյն չի կրնար հակնալ, թէ ինչով կ'ուզէ զբաղիլ կամ որ ան իրաւունք չունի որոշ ժամանակ անգործ նստելու եւ ոչինչ ընելու:

Ի տարբերութիւն կ'ընեն, որոնք տարիներով կը սորվին խոկումի հմտութիւնները, տղամարդոց սովորաբար բաւական է քանի մը վայրկեան լիցքաթափուելու, մտքերը ի մի բերելու եւ նոր եռանդով օրը շարունակելու համար: Այնպէս որ կը բաւէ տանջէք զինք ձեր հարցերով ու առաջարկներով:

Հանգիստ ձգեցէք, թող ան ինք որոշէ, թէ ինչպէս կ'ուզէ կազմակերպել իր ազատ ժամանակը: Երբ ան լիցքաթափուի ու հանգստանայ՝ ատկէ ե՛ւ ինք կը շահի, ե՛ւ՝ դուք:

Փոխադարձ Յարգանք ու Համաձայնութիւն. Երջանիկ Ամուսնութեան Կանոններ

1) Հետաքրքրութիւններ: Շատ կ'ընեն ամուսնանալէ ետք կը մտածեն միայն տնային գործերու եւ առօրեայ խնդիրներու մասին, մոռնալով սեփական հետաքրքրութիւններու եւ նախասիրութիւններու մասին: Կեանքը աւելի գունեղ դարձնելու համար պէտք է աշխատիլ, ուսանիլ կամ զբաղիլ որեւէ նախասիրութեամբ:

2) Ընտանեկան աւանդոյթներ: Երջանիկ ընտանիքներուն մէջ աւանդոյթներ կան: Օրինակ՝ առաւօտեան միասին սուրճ խմել, միասին երթալ աշխատանքի, ազատ ժամանակ հանդիպիլ, օրուան ընելիքները ծրարել եւ այլն: Առաջին հայեացքէն մանրուք կը թուի, բայց ասիկա շատ կարեւոր ու հակառակ նշանակութիւն ունի գոյգի կեանքին մէջ:

3) Հանդիպում: Շատ կ'ընեն կը մտածեն. «Աւարտեցաւ մեղրամիսը, վերջ, ռոմանթիկ կեանքը մնաց անցեալի մէջ»: Նոյնիսկ եթէ ամուսինը ռոմանթիկ հանդիպումներ կամ ընթրիք չի կազմակերպեր, կրնաք դուք ըլլալ նախաձեռնողը: Իսկ հաճելի անակնկալներու համար միշտ ալ կարելի է ժամանակ գտնել:

4) Փոխհամաձայնութիւն: Իւրաքանչիւր իրավիճակի մէջ ամուսինները պէտք է ամուր յենարան ըլլան իրարու համար: Անհրաժեշտ պարագային կարելի է նոյնիսկ ստանձնել ամուսինի դերը եւ ընտանիքին մէջ դառնալ գլխաւորը:

Կարեւորը՝ փոխադարձ յարգանք ու համաձայնութիւն ըլլայ:

5) Ընկերութիւն: Կ'ընեն ու ամուսինը պէտք է մտերիմ ընկերներ ըլլան իրարու համար: Անոնք միայն իրարու կրնան վստահիլ իրենց գաղտնիքները:

6) Ճիշդ առաջնահերթութիւն: Կնոջ կեանքին մէջ ամենակարեւոր տեղը կը գրաւէ ամուսինը: Նոյնիսկ եթէ գաւակ ունիք, ան չի կրնար առաջինը ըլլալ ձեր կեանքին մէջ: Ձեզի համար միշտ առաջնահերթ պէտք է ըլլայ ամուսիններու միջեւ եղած ամուր կապը:

7) Փոխգիշուծ: Յաճախ երբ կնոջ եւ տղամարդու յարաբերութիւններուն մէջ տարաձայնութիւններ կ'ըլլան, անոնք կ'որոշեն բաժնուիլ: Ասիկա ամենադժուր լուծումն է: Աւելի դժուար է դիմացինը հասկնալ ու փոխգիշուծան դիմելը: Սակայն միայն այսպէս կրնաք երջանիկ եւ երկարատեւ յարաբերութիւններ ունենալ:

8) Կատակելու զգացում: Եթէ ամուսինները կատակելու լաւ զգացում ունին, կրնան ծիծաղիլ սեփական սխալներու վրայ, ինչպէս նաեւ ճիշդ հասկնալ դիմացինին կատակը, ուրեմն անոնք կատարած են ճիշդ ընտրութիւն:

9) Յարգանք: Ուշադիր եղէք եւ յարգեցէք դիմացինը, անոր անձը, արժանապատուութիւնը, նախընտրութիւնները, կայացուցած որոշումները եւ այլն: Հոգատար եղէք իրարու հանդէպ:

«Մենք Ձեր Կողքին Եմք» Չինաստանի Հայկական Համայնքի Տեսուղերձը



Հոնկ Քոնկի եւ Չինաստանի հայ համայնքը չուզիլ տեսանիւթ հրատարակած է ուղղուած քորոնա ժահրի կանխարգելման դէմ Չինաստանի պաշտօրին:

Տեսանիւթին մէջ իրենց խրատական խօսքը փոխանցած են Չինաստանի տարբեր քաղաքներու մէջ ապրող հայեր: Անոնք իրենց խօսքերով փորձած են քաջալերել չինացի ժողովրդուն եւ իշխանութիւններուն, որոնք ձեռնարկած են աննախադէպ քայլեր համաճարակը դադրեցնելու համար:

Տեսանիւթը, որ պատրաստուած է Հայաստանի մէջ, նաեւ կը ներկայացնէ Երեւանի Քոնֆուց-

իուսի հիմնարկէն ներս չինարէն սորվող հայ ուսանողները:

Չինաստանի եւ Հոնկ Քոնկի հայ համայնքի նախագահ Հենրի Արսլանեանի խօսքերով՝ «այս քայլով մենք կ'ուզենք մեր չինացի ընկերներուն յիշեցնել, որ հայ ազգը մշտապէս պիտի աջակցի եւ պիտի ըլլայ չինացիներու կողքին՝ յատկապէս այս դժուարին շրջանին»:

«Հայերը Չինաստանի հետ խորագրով տեսահոլովակը արդէն հասնելի է YouTube-ի վրայ եւ պիտի ցուցադրուի չինական եւ արեւմտեան լրատուամիջոցներով՝ #ArmeniansWithChina եւ #WeAreChina հեղթեկներով:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:----- Email:-----

Զօրացիւք Օժանդակելք Փրկելք

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

www.syrianarmenianreliefund.org

Syrian Armenian Relief Fund
 P. O. Box 1948
 Glendale, CA 91209-1948

Հայ Թագուհիի Մասին Կրացական Ստեղծագործությունը Թրքերենի Թարգմանուած Է

Կրացական գրականութեան ամենահին ստեղծագործութիւններէն մէկը՝ «Սուրբ Շուշանիկ թագուհիի նահատակութիւնը» ստեղծագործութիւնը թարգմանուած է թրքերէնի եւ հրատարակուած է թրքական Otello հրատարակչութեան կողմէ:



Ստեղծագործութիւնը, որ վարքագրական վէպի նմոյշ է, գրուած է 476 եւ 483 թուականներու միջակայքը, իսկ պահպանուած ամենավաղ ձեռագիրը կը թուագրուի 10-րդ դարով: Հեղինակը Եագով Ծուրթաւելին է՝

նկարագրուող իրադարձութիւններու ժամանակակիցն ու մասնակիցը:

Ի դէպ, մօտաւորապէս այդ ժամանակ ստեղծուած է նաեւ Շուշանիկի վարքի հայկական կրճատ տարբերակը:

Ստեղծագործութեան մէջ կը նկարագրուին քրիստոնէութենէն չհրաժարած՝ վարդան Մամիկոնեանի դուստր Շուշանիկի տառապանքներն ու սպանութիւնը ամուսինի՝ Վարսկենի (Վագգէն) ձեռքով, որ Հարաւային Քարթլիի թագաւորն էր: Պարսիկներու հետ համագործակցելու նպատակով ընդունելով գրադաշտականութիւն՝ ան նոյնը կը պահանջէ նաեւ իր կնոջն ու երեխաներէն: Շուշանիկը, մերժելով անոր պահանջը, վեց


տարի կ'անցընէ գնտանի մէջ՝ ենթարկուելով տանջանքներու եւ ստորացման, այնուհետեւ՝ կը սպաննուի:

Եակով Ծուրթաւելին կը հաւաստիացնէ, որ ինք եղած է թագուհիի խոստովանահայրը, ստեղծագործութեան մէջ կը շարադրէ իր գրոյցները թագուհիին հետ: Երկին մէջ տեղեկութիւններ կան երկրի պետական կառուցուածքին, պատմութեան, կրօնի, հին վրաստանի ու Հայաստանի վնակիչներու առօրեայ կեանքին մասին:

«Շուշանիկի վարքը» առաջին անգամ հրատարակուած է 1882-ին: Անիկա թարգմանուած է ռուսերէն, լատիներէն, անգլերէն, գերմաներէն, ֆրանսերէն, սպաներէն եւ հունգարերէն: 1979-ին ԵՌԻՆԵՍՔՕ-ի կողմէ նշուած է այդ գրական յուշարձանին 1500-ամեակը:

Պոլսոյ Մէջ Լոյս Տեսած Է Յեղասպանութեան Օրերուն Տէր Զօրի Մարգպետին Մասին Գիրք

Պոլսոյ մէջ, Թուրքիոյ հասարակական եւ պատմական ուսումնասիրութիւններու հիմնարկութեան կողմէ հրատարակուած է պատմաբան Դոկտ. Արսէն Աւագեանի՝ «Սուրբ Մնացած Գործիչ Մը՝ Երիտթուրք Համայնավար Սալիհ Զեքին (Քուշարքով)» թրքերէն հատորը:



Գիրքին մէջ Արսէն Աւագեան կ'անդրադառնայ ոչ միայն Թուրքիոյ մէջ Համայնավարական շարժման պատմութեան, այլ նաեւ Հայոց Յեղասպանութեան իրագործման մէջ Զեքիի դերակատարութեան: Յիշեցնենք, որ վերջինս Մեծ Եղեռնի տարիներուն եղած է Տէր Զօր մարզի կառավարիչը, իսկ աւելի ուշ՝ դարձած է Թուրքիոյ համայնավար շարժումի հիմնադիր ղեկավարը:

նութիւններ: Հեղինակը այս արժէքաւոր ուսումնասիրութեան միջոցով կարեւոր ներդրում մը կը կատարէ Հայոց Յեղասպանութեան պատմութեան եւ Թուրքիոյ Հանրապետութեան հիմնադրման գործընթացին մասին ուսումնասիրութիւններուն մէջ:

Այս հատորին շնորհիւ առաջին անգամ ըլլալով գիտական շրջանառութեան մէջ կը դրուին Օսմանեան կայսրութեան վարչապետարանի արխիւին ու Ռուսիոյ պետական քաղաքական եւ հասարակական պատմութեան արխիւին այն փաստաթուղթերը, որոնց մէջ ներկայացուած են Զեքիի մասին հական մանրամասն

Սուրբ Մարգպետի Նուիրուած Ժողովրդական Սովորութիւններ

Ժողովուրդը Սուրբ Մարգպետի տօնը նշած է բազում սովորութիւններով: Այդ օրը կը կազմակերպուէին գանգուածային ուխտագնացութիւններ դէպի Սբ. Մարգպետի նուիրուած սրբավայրեր, որոնց թիւը բաւական շատ էր Հայաստանի մէջ: Այստեղ սուրբի յիշատակին համար մոմեր կը վառէին, կ'աղօթէին: Սբ. Մարգպետի ուխտէն վերադարձող ճանապարհին մէկուն հանդիպելով սովորականի պէս չէր բարեւեր, այլ կ'ըսէր. «Նաչը քեզ ողջոյն դարկէ», իսկ հանդիպողը կը պատասխանէր՝ «Ողջ մնաս» բարեմաղթութեամբ:

վերջին օրն էր եւ հարսնացու աղջիկ ունեցող մայրերը այդ գիշեր յատուկ երգեր կ'երգէին:

Այդ գիշեր երիտասարդները, յատկապէս աղջիկները, աղի բլիթ կ'ուտէին, որպէսզի երազ տեսնեն: Անոնք կը հաւատային, որ Սբ. Մարգպետ այդ գիշեր կ'որոշէ իրենց բախտը եւ ան, որ երազին մէջ ջուր տայ խմելու, պիտի դառնայ իրենց ապագայ գուզընկերը:

Սբ. Մարգպետի նուիրուած այդ սրբավայրերուն մէջ քիչ մը ջուր կը լեցնէին խաչին վրայ եւ այդ խաչուաչի ջուրով ու մեղրով կը պատրաստէին փոխինդէ կլոնդակ, որով կը լուծէին պահքը:

Ուրբաթ երեկոյեան գրեթէ բոլոր տանտիկիւնները ամանով չոր փոխինդ կը դնէին տան կտուրին կամ դրան ետեւ, մոմեր կամ կանթեղ կը վառէին, յուսալով, որ Սբ. Մարգպետ պիտի այցելէ իրենց տուն՝ իր ձիւ պայտին հետքը ձգելով փոխինդին վրայ: Պայտի հետքը երազանքներու իրականացման խորհրդանիշ էր: Տանտիրուհին այս փոխինդէն ետք խաչի կ'նփէր, որ կը ճաշակէին տան բոլոր անդամները:

Սբ. Մարգպետի տօնի նուիրական ուստեսը փոխինդն (խարկած ալիւրով, իւղով ու խաղողի ուռպով պատրաստուած ուտելիք) էր եւ խաչիլը (խարկած ալիւրով, ծեծած ցորենով, իւղով ու թանով պատրաստուած ուտելիք), որոնց գործածութիւնը նախընթաց հինգ օրերու ընթացքին կ'արգիւտէր:

Սբ. Մարգպետի տօնին երեխաները կը բարձրանային երգիկներու վրայ եւ երգելով անցքէն գուլպաներ կամ քակներ կ'իջեցնէին՝ նուէրներ ստանալու ակնկալութեամբ, որ գրեթէ միշտ կ'իրականանար: Տանտիկիւնները սովորաբար անոնց մէջ կը դնէին այդ տօնի ծիսական կերակուրներէն եւ քանի մը մանր դրամ:

Շաբաթ առաւօտեան Սբ. Պատարագ կը մատուցուէր եւ գրեթէ բոլորը եկեղեցի կ'երթային: Զաւախքի մէջ, օրինակ, այդ Պատարագը կը մատուցէր ռեւէ գերդաստան, որ հին եւ նոր ննջեցեալներու հոգիի փրկութեան նպատակով հոգեհաց կու տար բոլոր չափահաս, մասնաւորապէս՝ տարեց մարդոց:

Շաբաթ առաւօտեան տեղի կ'ունենար «աղջիկ ժողովրտանք»-ը, երբ հարսնացու աղջիկները կը հաւաքուէին որեւէ տեղ, կը շնորհաւորէին իրարու, կը պատմէին ու կը մեկնաբանէին տեսած երազները: Այնուհետեւ կը սկսէր հացկերոյթը: Ատիկա հարսնացու աղջիկներուն ուրախութիւնն էր, անոնց հանգիստի տօնը, որ կը տեւէր մինչեւ երեկոյ: Անոնք կը պարէին, կ'երգէին, կը կատակէին: Փեսացու տղաները այդ օրը կ'աշխատէին ներկայ ըլլալ աղջիկներու հաւաքատեղիին մօտ: Երիտասարդներէն իւրաքանչիւրը կ'ուզէր տեսնել իր հարսնացուն, հանդիպիլ հաւնած աղջկան, քանի որ մեծերը Սբ. Մարգպետի տօնին մեղմօրէն կը վերաբերէին այդ հանդիպումներուն:

Սովորոյթին համաձայն, այդ շաբթուան ընթացքին մարդիկ ծանր գործեր չէին ընէր, ոչ ճախարակ կը մանէին, ոչ բուրդ կը գգէին եւ ոչ ալ լուացք կ'ընէին: Կիները, մանաւանդ աղջիկները, գլուխները չէին լուար, որպէսզի «Սբ. Մարգպետ ձին չսայթաքէր օճառաջուրի վրայ»: Պահքի օրերուն աղջիկներն ու երիտասարդները հինգ օր կը հրաժարէին սովորական կերակուրէն՝ գոհանալով չոր հացով, որ կ'ուտէին արեւամուտէն ետք: Միայն նման ժուժկալութեամբ կարելի էր արժանանալ սուրբի բարեգթութեան: Մէկ շաբաթ շարունակ, բացի պահք պահելէն, երիտասարդներու խօսակցութեան առարկան Սբ. Մարգպետն էր: Տարիքոտ կանայք՝ մայրերն ու մեծմայրերը կը պատմէին, թէ ինչպէս իրենք տարիներ առաջ մասնակցած էին Սբ. Մարգպետի տօնին: Պահքի Ուրբաթ օրը Հայաստանի բոլոր շրջաններուն մէջ բոված ցորենը երկանքով կ'աղային, փոխինդ կը պատրաստէին ու շաղելով խաղողահիւթով, կը ճաշակէին: Ուրբաթ օրը պահքի

Սբ. Մարգպետի տօնի սովորոյթներէն էր նաեւ սուրբին անունը կրողներու անուանակոչութիւնը նշելը, անոնց նուէրներ մատուցելը, յատուկ հիւրասիրութիւն կազմակերպելը, այդ օրը ծնածները սուրբին անունով կոչելը:

Սբ. Մարգպետի տօնէն մինչեւ Բուն Բարեկենդան ժամանակահատուածը կը համարուէր հարսանեաց արարողութիւններու մեծ շրջան: Գրեթէ բոլոր շրջաններուն մէջ հարսանիքներու նկատելի մասը կը կատարուէր այդ ժամանակա շրջանին:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ
Մարի Սէրայտարեանի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ամուսինին Տիար Սահակ Սէրայտարեանին եւ համայն ընտանեկան պարագաներուն:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՄԲ ԲԱՐԵՉԱՐԴՈՒԱԾ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Հանրաքուէ. Բարդ է Լինելու

Շարունակուած էջ 2-էն

մէկ քառորդը»:

2018 թուականին Աժ արտահերթ ընտրութիւններէն առաջ հրապարակուել է ընտրելու իրաւունք ունեցող ՀՀ քաղաքացիներէ թիւը, այն է՝ 2 մլն 574 հազար 916 քաղաքացի: Այսինքն, ցուցակներում ներառուած մօտ 2.6 մլն անձանց՝ մօտ 650 հազար քաղաքացի պէտք է ոչ միայն տեղամաս գնայ, այլեւ՝ կողմ քուէարկի, որպէսզի հանրաքուէի արդիւնքները համարուեն ընդունուած: Աժ վերջին արտահերթ ընտրութիւններին մասնակցել է ընտրելու իրաւունք ունեցողներէ մօտաւորապէս կէսը, ինչը նախկին իշխանութիւնները հմտօրէն օգտագործել են քարոզչութեան մէջ, թէ իբր ՀՀ քաղաքացիներէ կէսը բոյկոտել է ընտրութիւնները: Ի դէպ, 2017-ի Աժ ընտրութիւններում մասնակցիցներէ թիւը մօտաւորապէս 300 հազարով էր աւելի:

Բայց ամբողջ ինդիւստրիալ տեղ է, այսպէս կոչուած՝ «ուռ-ճացուած» ցուցակները: Ընդ որում, խօսքը ոչ այնքան մեռել կամ գոյութիւն չունեցող անձանց ընտրական ցուցակներում լինելու մասին է, որքան այն անձանց, ովքեր ՀՀ քաղաքացի լինելով հանդերձ՝ տարիներով Հայաստանում չեն բնակուած եւ ընտրութիւններէ քուէարկութիւններին չեն մասնակցել: Նախկին իշխանութիւններէ համար սա լաւ տարբերակ էր՝ բացակայութեան տեղը այս կամ այն ձեւով լրացնելու, ինչպէս նաեւ՝ սովորաբար ընտրութիւններին չմասնակցող կամ անտարբեր անձանց այս կամ այն եղանակով շահագոգրելով՝ տեղամասէր տանելու (բաւրա բուն իմաստով) համար: Կեղծուող ընտրութիւններէ ժամանակ սա առաւելութիւն է: Ազատ եւ չկեղծուող ընտրութիւններէ ժամանակ՝ ինչդիր, որովհետեւ թուերէ մանիպուլյացիա է արուած՝ մէկ, եւ ապա՝ հանրաքուէներէ պարագայում արդիւնքի ընդունուելու համար պարտադիր պայման է: Այսինքն, իշխանութիւնները լուրջ խնդիր պէտք է լուծեն՝ գոնէ Հայաստանում բնակուող ընտրելու իրաւունք ունեցող անձանց,

այսպէս ասած՝ մոբիլիզացիոն համար, այնպիսի քարոզչութիւն իրականացնելու համար, որ մարդիկ չալարեն եւ գնան տեղամասեր ու քուէարկեն:

Յատկապէս, որ այս առումով էական է հանրային վարքի հարցը: Դուր գա դա մեզ, թէ ոչ, ուզենք, թէ չուզենք՝ քաղաքականութեան մէջ մեծամասնութեան համակրանքները կայուն չեն: Սովորաբար, կայուն քաղաքական համակրանքներ ունեցողներէ քանակը մեծ չէ, քաղաքական ուժերը սովորական իրավիճակներում ունենում են կողմնակիցներէ քիչ «բանակ»: Մեծամասնութիւնը կողմնորոշուած է ըստ քաղաքական իրավիճակի, եւ քաղաքականացում է կարեւոր գարգացումներէ ժամանակ, եւ կողմնակից է դառնում քաղաքական ուժին կամ անձին, եթէ նրա մէջ ուժ է տեսնում՝ յոյսով, որ իր քուէն այդ ուժերին տալով՝ նրան պատգամում է լուծելու այս կամ այն հարցը՝ տալով այդ ուժին իշխանական, այդ թուում՝ ուժային լծակներ: Եւ այդ քուէն տալուց յետոյ մեծամասնութիւնը համարում է իր առաքելութիւնն աւարտուած, բայց եթէ այդ ուժը լծակներ ստանալուց յետոյ նորից ու նորից դիմում է նոյն այդ ժողովրդին, հանրութիւնը կարող է կանկածներ ունենալ, որ այդ ուժը,՝ անգամ իշխանական լծակներ ունենալով, փաստօրէն՝ էլ ուժեղ չէ, հանրութիւնը դա ընկալում է որպէս իր ընտրելու ուժի թուլացում, եւ էջֆորիան ինքնաբերաբար կարող է թուլանալ: Ուստի, այս հարցում եւս իշխանութիւնը լուրջ անելիքներ ունի՝ համոզելու համար մարդկանց հանրաքուէի կարեւորութեան հարցում:

Եւ վերջում, կեղծ է պնդումը, թէ այս հանրաքուէն իշխանութեան հանդէպ վստահութեան հանրաքուէ կը դառնայ: Դա այդպէս չէ, որովհետեւ հանրաքուէին կարող են մասնակցել եւ «այո» քուէարկել ոչ միայն իշխող ուժի կողմնակիցները, այլեւ նրանք, ովքեր սովորական ընտրութիւններում այս իշխանութեանը կարող են եւ չընտրել, եւ 2018-ի արտահերթ ընտրութիւններում գուցէ չեն էլ ընտրել նրանց: «Ի ԼՈՒՐ»

Կամրջելով Պատմութիւններ

Շարունակուած էջ 16-էն

կոյճները մօտ են, ուտելիքները, մարդիկ, երբեմն՝ բառերն ու արտայայտութիւնները նման են: Այս ծրագրին ընթացքին երբ կը գրուցէի թուրք ընկերներու հետ, հայ մասնակիցները սովորաբար կը հասկնային մեզ»:

Բոլոր մասնակիցները վստահ են, որ հայ-թրքական հասարակական երկխօսութիւնը այսօր լաւ հիմքերու վրայ է եւ ատոր կայացման կը նպաստեն նաեւ այսպիսի ցուցահանդէսները եւ նմանատիպ ձեռնարկները, որոնք վերջին տարիներուն յաճախակի դարձած են երկու երկիրներուն մէջ: «Կամրջելով պատմութիւնները» լուսանկարչական ցուցահանդէսի մասնակիցները ամիսներ շարունակ հարիւրաւոր լուսանկարներ տեղադրած են Instagram-ի #BridgingStories կայքէջին մէջ, որ ունի 13 հազարէն աւելի հետեւող՝ ամբողջ աշխարհի տարածքին: Ցուցահանդէսին ներ-

կայացում են 20 լուսանկարիչներէն 60 ընտրուած լուսանկարներ: ՆՓԱԿ-ի մէջ այս ցուցահանդէսը նախօրօք յայտարարուած փետրուար 4-ի փոխարէն կը շարունակուի մինչեւ փետրուարի վերջին օրը, իսկ իսթանպուլի մէջ՝ մինչեւ 7 փետրուար:

Ներկաները ցուցահանդէսի բացումին ըսին, որ եւս մէկ փոխըմբռնման կամուրջ մը կառուցուեցաւ:

Ճոն Սթենմայրը. «Պատմութիւնը, որ կը պատմեն այս լուսանկարիչներէն իւրաքանչիւրը, իրենց կեանքի եւ աշխարհի մասին պատմող գեղեցիկութիւններն են, որոնց մէջ կայ կախարդական բան մը, որ ունին այս երկակի նմանութիւնները: Յուսամ, երբ մարդիկ տեսնեն այս ցուցահանդէսը, կը կարենան տեսնել եւ զգալ մանաւանդ երկու մշակուածներուն նմանութիւնները: Մեզի՝ ծրագիրը ուսուցանողներու համար հաճելի է երթալ այս վայրերը եւ տեսնել, թէ փոփոխու-

«Յիշատակարանք Ձեռագրաց»

Շարունակուած էջ 15-էն

Իր դիտարկութեամբ Տէր Ներսէսեան կարեւոր պարագայ մը եւս կը նշէ թէ Հայրապետ Հեղինակը յաճախ դիտմամբ խուսափած է կանգ առնելու ձեռագիրներու գեղարուեստական եւ մանրանկարչութեան քննութիւնը կատարելէ, միշտ ի մտի ունենալով «գունաւոր նկարներու ալյուրի ձեւով ի լոյս ընծայել, պարագայ մը որ

չիրագործուեցաւ դժբախտաբար, հակառակ անոր որ Գարեգին Կաթողիկոս պատրաստած էր արդէն գանոնք»: Այս կը նշանակէ որ ձեռագիրներէն շատերը ունին իրենց մանրանկարչութիւնները, նոյնիսկ շատ յայտնի նկարիչներէ, որոնց մասին Հայրապետը առանձինն պիտի անդրադառնար յատուկ հրատարակութեամբ: Սիրարփի Տէր Ներսէսեան կ'ափսոսար որ այդ մէկը կարելի չեղաւ իրականացնել:

Թիւնները ինչպէ՛ս կ'իրականանան, մանաւանդ մշակուած մարդիկ, շատ կը փափաքին տեսնել այդ փոփոխութիւնները եւ փոփոխութիւնները նախ մարդոց ներսն է, որ կը կատարուին: Նմանութիւնները երկու երկիրները կը միաւորեն եւ ոչ թէ կը բաժնեն: Ասոնք խաղաղութեան տանող քայլեր են. խաղաղութիւնը, որուն մասին բոլորս կը խօսինք: Մենք չենք կրնար փոխել անցեալը, որ արդէն եղած է. մենք չենք կրնար ապրիլ անցեալի մէջ. պէտք է առաջ նայիլ, դէպի ապագայ, իսկ ապագան հիմա կը սկսի»:


Ծրագիրը միւս իրականացնողը՝ լուսանկարիչ Անուշ Պապաճանեանը, վստահ է, որ ծրագիրը իր նպատակին հասաւ այն առումով, որ ցոյց տուաւ երկու ժողովուրդները կապող թելերը: «Լուսանկարները ցոյց կու տան, որ հայերը եւ թուրքերը, անկախ քա-

ղաքականութենէն եւ անկախ ամէն ինչէն, սովորական մարդիկ են, իրարու նման են, ինչպէս ամբողջ աշխարհի մէջ բոլոր մարդիկ», ցուցահանդէսին յայտնեց Անուշ Պապաճանեան:

Թուրքիայէն մրցանակակիր լուսանկարիչ Սապիհմա Չիմէն նոյնպէս խօսեցաւ ծրագրին իր մասնակցութեան մասին, ըսելով, որ ի սկզբանէ հաւատացած է, թէ կարելի է լուսանկարներու միջոցաւ ստեղծել միջակութիւն երկխօսութիւն. «Ես Հայաստանը տեսնելու ցանկութիւն ունէի եւ միեւնոյն ժամանակ ինծի համար շատ լաւ փորձ էր առաջին անգամ ներկայանալ որպէս խորհրդատու: Այս ծրագրին ընթացքին մենք իրարմէ շատ բան սորվեցանք, գիրար աւելի լաւ ճանչցանք, դասաւանդելը եւ հարողակից դառնալը շատ օգտակար եւ կարեւոր եղաւ», ըսաւ Սապիհմա Չիմէն:

VA Print Media


Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Յեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք գանոնք վաճառել, կը ինդերենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԷ ԱՁԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան

Vahe Atchabahian
2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

«Ռոման»-«Բոլոնիա»՝ 2:3. Մխիթարեանի Կոլը Զ'օգնեց

Իտալիայի առաջնու-
թեան 23-րդ տու-
րում «Ռոման» Հռոմի
«Օլիմպիկո» ստադիո-
նում մրցեց «Բոլոնիա-
յի» հետ: Պորտուգալա-
ցի Պաուլու Ֆոնսեկայի
գլխավորած թիմը պար-
տութիւն կրեց 2:3 հա-
շուով:



16-րդ րոպէին խա-
ղի հաշիւը բացեց «Բո-
լոնիայի» իտալացի յար-
ձակուող Ռիկարդօ Օր-
սոլինին: 22-րդ րոպէին
«Բոլոնիայի» հոլանդա-
ցի պաշտպան Ստեֆանո
Դենսլիլը դարձաւ ինք-
նակոլի հեղինակ: 26-րդ րոպէին «Բոլոնիային» հաշուի մէջ առաջ մղեց
Գամբիան ներկայացնող յարձակուող Մուսա Բերրոուն, որը 51-րդ րոպէին
դուբլ ձեւակերպեց: 72-րդ րոպէին Բրունօ Պերեսի փոխանցումից յետոյ
«Ռոմայի» երկրորդ կոլը գլխի հարուածով խփեց Հայաստանի ազգային
հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը:

Վնասուած քից ապա քինուելուց յետոյ Մխիթարեանն առաջին հան-
դիպումն էր անցկացնում «Ռոմայի» կազմում: 31-ամեայ կիսապաշտպա-
նը խաղադաշտ էր դուրս եկել «Ռոմայի» մեկնարկային կազմում եւ
մասնակցեց ամբողջ հանդիպմանը:

Այժմ «Ռոման» ունի 39 միաւոր եւ մրցաշարային աղիւսակի 5-րդ
տեղում է:

Իտալիայի Առաջնութիւն, 23-րդ Տուր «Ինտեր» - «Միլան»՝ 4:2

Իտալիայի առաջնութեան 23-րդ տուրում տեղի ունեցաւ հռչակաւոր
միլանեան դերբին «Ինտերի» եւ «Միլանի» միջեւ:

4:2 հաշուով առաւելութեան հասաւ իտալացի Անտոնիօ Կոնտեի
գլխավորած թիմը, թէեւ առաջին խաղակէսից յետոյ «Միլանը» յաղթում
էր 2:0 հաշուով: Կոլի եւ կոլային փոխանցման հեղինակ դարձաւ շուէտ
յարձակուող Ջլատան Իբրահիմովիչը:

Երկրորդ խաղակէսում «Ինտերը» կարողացաւ չորս կոլ խփել եւ
հասնել կամային յաղթանակի:

«Ինտերը» 54 միաւորով հաւասարուեց Թուրինի «Յուվենտուսին»
եւ կոլերի տարբերութեամբ բարձրացաւ առաջին տեղ: «Միլանը» 10-
րդն է՝ 32 միաւոր:

Ռեալը Արտագնայ Խաղում Յաղթեց Օսասունային

Սպանիայի առաջնութեան 23-րդ
տուրի շրջանակում Մադրիդի «Ռեա-
լը» հիւրընկալուել էր «Օսասունա-
յին»:



Հանդիպումը լաւ չմեկնարկեց
Ջինեդին Ջիդանի թիմի համար: 14-
րդ րոպէին Ունայ Գարսիան առաջ
մղեց տանտէրերին: Առաջին կէսի
երկրորդ հատուածում «Ռեալը» կա-
րողացաւ երկու գնդակ խփել: 33-րդ
րոպէին աչքի ընկաւ Իսկոն: Եւ հինգ
րոպէ անց կոլի հեղինակ դարձաւ
Սերխիօ Թամուր:

Հանդիպման վերջնամասում եր-
կու գնդակ արձանագրուեց փոխարին-
ման դուրս եկած ֆուտպոլիստների կատարմամբ: Նախ Լուկաս Վասկեսը
գրաւեց մրցակցի դարպասը: Մրցավարի կողմից աւելացուած ժամանա-
կում էլ աչքի ընկաւ Լուկա Յովիչը: «Ռեալը» յաղթեց 4-1 հաշուով:

Այս արդիւնքից յետոյ «արքայական» ակումբը միաւորների
քանակը հասցնում է 52-ի ու շարունակում է գլխավորել Լա լիգայի
մրցաշարային աղիւսակը:

«Բարսելոնայի» Կամային Յաղթանակը

Սպանիայի առաջնութեան 23-րդ տուրում ախոյեան «Բարսելո-
նան» հիւրընկալուեց «Բետիսին»: Էնրիկէ Սետիենի գլխավորած թիմը
ծանր պայքարում կամային յաղթանակ տարաւ 3:2 հաշուով:

Կատալոնական թիմի կազմում կոլ խփեցին հոլանտացի կիսապաշտ-
պան Ֆրենկի դէ Յոնգը, սպանացի կիսապաշտպան Սերխիօ Բուսկետան
ու ֆրանսացի պաշտպան Կլեման Լանգլեն, որը վերջնամասում երկրորդ
դեղին քարտի համար հեռացուեց: Երեք կոլային փոխանցումն էլ
կատարեց արգենտինացի յարձակուող Լիոնել Մեսին:

«Բետիսը» եւս վերջնամասն անցկացրեց 10 ֆուտպոլիստներով:
Երկրորդ դեղին քարտ ստացաւ առաջին խաղակէսում կոլի հեղինակ
դարձած Ֆրանսուան ներկայացնող յարձակուող Նաբիլ Ֆեկիրը:

«Բարսելոնան» 49 միաւորով երկրորդ տեղում է եւ 3 միաւոր հետ
է առաջատար «Ռեալից»: «Բետիսը» 13-րդն է՝ 28 միաւոր:

WBA. Արտիոմ Դալաքեանը Պաշտպանել է Աշխարհի Ախոյեանի Տիտղոսը



Պրոֆեսիոնալ բռնցքամարտի WBA վարկածով աշխարհի ախոյեան
Արտիոմ Դալաքեանը (20-0, 14 նոկաուտ) պաշտպանել է տիտղոսը
Թեթեւագուշն քաշային կարգում (50,8 կգ):

Ուկրաինան ներկայացնող հայ մարզիկը Կիւեւում մենամարտել է
տիտղոսի հաւակնորդ, Վենեսուելայի ներկայացուցիչ Խոսեբեր Պերեսի
(17-4, 15 նոկաուտ) հետ: 12 ռաունդ տեւած մենամարտում Արտիոմ
Դալաքեանը յաղթել է մրցավարների միաձայն որոշմամբ՝ 118:110,
117:111, 117:111:

Արտիոմ Դալաքեանը չորրորդ անգամ պաշտպանեց 2018թ. Փետր-
ուարի նուաճած աշխարհի ախոյեանի տիտղոսը:

Հայ Ծանրորդները Վերադարձան Օլիմպիական Վարկանիշային Մրցաշարից

Իրանական Ռաշտ քաղաքում աւարտուեց ծանրամարտի 5th Fajr Cup
մրցաշարը, որը վարկանիշային էր Տոկիօ-2020 ՕՊ-ի համար: Հայաս-
տանը մրցաշարին մասնակցեց 4 ծանրորդով: Մեր մասնակիցները
նուաճեցին ընդհանուր առմամբ 1 ոսկէ, 4 արծաթէ եւ 2 պրոնզէ մետալ:
Ընդհանուր հաշուարկում Հայաստանը 13 հաւաքականների պայքարում
գրաւեց 4-րդ տեղը:

«Լիւերպոլը» 40 Հանդիպում Անընդմեջ Պարտութիւն Չի Կրել «ԷՆՖիլդում»

Անգլիական «Լիւերպոլը» սեփական ստադիոնում անպարտելի
հանդիպումների շարքը բոլոր մրցաշարերում հասցրեց 40-ի՝ 35
յաղթանակ, 5 ոչ ոքի:

Անգլիայի գաւաթի խաղարկութեան 1/16 եզրափակիչի երկրորդ
խաղում «Լիւերպոլը» երիտասարդական կազմով 1:0 հաշուով յաղթեց
«Շրուսբերի թաունին» եւ դուրս եկաւ յաջորդ փուլ: Առաջին խաղում
գրանցուել էր ոչ ոքի՝ 2:2:

«Էնֆիլդում» անցկացրած նախորդ 7 հանդիպումներում «Լիւեր-
պոլը» կոլ բաց չի թողել:

Նախորդ անգամ «Էնֆիլդում» «Լիւերպոլը» պարտուել է 2018թ գ
Սեպտեմբերի 26-ին՝ 1:2 հաշուով «Չելսիին» Անգլիական լիգայի
գաւաթի խաղարկութեան խաղում:

Մեսսին Չի Ստածում «Բարսելոնայից» Հեռանալու Մասին

Կատալոնական «Բարսելոնայի» եւ Արժենթինայի ազգային հաւա-
քականի առաջատար Լիոնել Մեսսին մտադիր չէ փոխել ահումբային
գրանցումը:

Sky Sports-ի հաղորդմամբ՝ «Բարսելոնայի» նախագահ Խոսեպ
Մարիա Բարտոմեուի հետ հանդիպումից յետոյ 32-ամեայ յարձակուողը
որոշել է ընթացիկ մրցաշրջանի աւարտին նոր պայմանագիր
ստորագրել «Բարսելոնայի» հետ:

Յիշեցնենք, որ Մեսսի եւ «Բարսելոնայի» ղեկավարութեան յարա-
բերութիւնները սրուել են: Պատճառը եղել էր ակումբի մարզական
անօրէն էրիկ Աբիդալի յայտարարութիւնը, թէ թիմի նախկին գլխավոր
մարզիչ էռնեստօ Վալվերդէի ղեկավարութեամբ շատ խաղացողներ
լիարժէք չէին դրսևորում իրենց: Դրանից յետոյ արժենթինացի
ֆուտպոլիստը Աբիդալին յորդորել էր նշել այդ ֆուտպոլիստների
անունները կամ նման վարկաբեկող յայտարարութիւն չանել:

Gazzetta dello Sport պարբերականը նաեւ յաւելել է, որ «Բարսելո-
նան» իր հերթին է պատրաստուում հնարաւոր բոլոր զարգացումներին
եւ Մեսսիի հեռանալու դէպքում ունի լուծում: Կատալոնացիների
շարքերը կարող են համալրել Լաուտարօ Մարտինեան ու Նեյմարը, որոնք
ծառայութիւններով ակումբը վաղուց է հետաքրքրուած: Կատալոնական
կողմը վստահ է, որ վերջիններս կարող են փոխարինել Մեսսին ու Լուիս
Սուաւերսին: